AZG NEW PDF.qxd 12/04/2010 22:12 Page 1

# Ազգ
Azg

13 ԱՊՐԻԼ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 65 (4445)

ISSN: 1829-1651

## Վիրահայերի կոչը՝ Սաակաշվիլուն

**Վրաստանի հայ համայնքը դիմել է նախագահ Մ. Սահակաշվիլուն եւ խորհրդարանին՝ կոչ անելով քննարկել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:**

**Ինչպես տեղեկացնում են Վրաստանի հայկական համայնքից, օրինագծի նախաձեռնությամբ հանդես գալու խնդրանքով նամակներ են ուղարկվել երկրի ղեկավարին, խորհրդարանի նախագահին եւ խորհրդարանական խմբակցություններին, ինչպես նաեւ օրենսդիր մարմնի հայազգի պատգամավորներին:**

**Վերջիններին հայկական համայնքի ներկայացուցիչները կոչ են անում մինչեւ ապրիլի 24-ը խորհրդարանական նիստում հանդես գալ հայտարարությամբ եւ Վրաստանի խորհրդարանին կոչ անել հարգելու 1915-1923 թթ. Հայոց ցողասպանության անմեղ զոհերի հիշատակը: Նախաձեռնության հեղինակներն են «Վրաստանի հայ համայնք», «Վրաստանի հայկական համագործակցության կենտրոն» եւ Վրաստանի հայ ուսանողների միություն» հասարակական կազմակերպությունները:**

# Սարգսյան-Էրդողան հանդիպում Վաշինգտոնում

*Ենթադրվում է, որ կողմերը փոխադարձաբար հաստատեն իրենց հավատարմությունը հայ-թուրքական նորմալացման գործընթացին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Երեկ Վաշինգտոնում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Հանդիպումը տեղի ունեցավ Միջուկային անվտանգության գագաթաժողովի շրջանակներում: Այնուհետեւ երկու երկրների ղեկավարների հետ առանձին հանդիպում կունենա ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, թերեւս դրանով էլ կընդգծվի, թե ո՞ւմ է պատկանում նախագահ Սարգսյանի հետ վարչապետ Էրդողանի խնդրանքով իրականացված երկկողմ այդ հանդիպման բուն նախաձեռնությունը:




Նախաձեռնության պարագան, անկախ արդյունքներից, խիստ կարեւոր է Սարգսյան-Էրդողան հանդիպման ընթացքի համար այն առումով, որ ցուցաբերվում է ելման կետ վերադարձող Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացին լիցք հաղորդելու առաջադրանքով: Այս հանդիպման համար, որը նախապես կանխորոշել էր նախագահ Օբաման՝ հրավիրելով Սերժ Սարգսյանին գագաթաժողով, կարեւոր է նաեւ Էրդողանի հատուկ ներկայացուցիչ Սինիրլիօղլուի գործուղումը Երեւան:

Ընդ որում, ներկայացուցչին Երեւան գործուղելու պահին Էրդողանը Փարիզում էր: Այլ կերպ, նա հանդիպման առաջարկով ՀՀ նախագահին դիմեց Ֆրանսիայից պաշտոնական այցի ընթացքում, Միջուկային անվտանգության գագաթաժողովի համար ԱՄՆ ուղեւորվելուց առաջ: Հանդիպումը տեղի ունեցավ ապրիլի 24-ի նախօրեին: Ֆրանսիան եւ ԱՄՆ-ն, ինչպես «Միլլիեթի» ապրիլի 10-ի համարում նշել է Սեմիհ Իդիզը, հայկական բանաձեւերի առումով Թուրքիայի համար թերեւս ամենախնդրահարույց երկրներ են, նրանք միաձայն հակադրվում են ՀՀ Սահմանադրական դատարանի հայ-թուրքական արձանագրություններին վերաբերող որոշման Անկարայի առարկումներին: Ավելին, նշում են, որ այդ որոշումը ճանապարհ է հարթում դրանց վավերացման համար եւ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներ, կտրականապես մերժում են Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացը՝ Ղարաբաղի հիմնահարցով պայմանավորելու Էրդողանի նկրտումները:

*Տես էջ 2*

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

## Խորհրդաժողով Գերմանիայում

**Գերմանիայում քրդական ինստիտուտի, Եվրոպայի խաղաղության խորհրդարանի, Թուրք-գերմանական մարդու իրավունքների միության եւ Եվրոպայի թուրք աշխատավորների կոնֆեդերացիայի նախաձեռնությամբ ապրիլի 24-ին գերմանական Քյոլն քաղաքում տեղի կունենա խորհրդաժողով՝ «Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը» թեմայով:**

**Խորհրդաժողովը նախագահելու է հայրենիքից հեռացած թուրք լրագրող Գյունայ Ասլանը, կմասնակցեն Հրանտ Դինքի իրավահաջորդների փաստաբան Էրդալ Դողանը, ասորիների համայնքի ղեկավար Ջորջ Արյոն, վերլուծաբան Նազարեթ Վարդանօղլուն եւ եզդիների միության ներկայացուցիչ Ալի Սաչըքը:**

**Հիշեցնենք, ինչպես նախորդ համարներում տեղեկացրել էր մեր թերթը, Հայոց ցեղասպանության քննարկումները բավական ակտիվացել են Գերմանիայում. հայտնի «Շպիգել» հանդեսը օրերս ընդարձակ հոդված հրատարակեց ցեղասպանության վերաբերյալ, գերմանական կինոթատրոններում, ինչպես նաեւ հեռուստատեսությամբ ցուցադրվեց ցեղասպանության մասին պատմող «Աղետ՝ մի ցեղասպանություն» ֆիլմը, որի անդրանիկ ցուցադրմանը ներկա էին Գերմանիայի դիվանագիտական կորպուսի մի շարք ներկայացուցիչներ: Հիշեցնենք նաեւ, որ գերմանական Բունդեսթագը 2005-ին ընդունեց հայտարարություն, որով պահանջում էր Թուրքիայից՝ վերանայել սեփական պատմությունը եւ դատապարտել տեղի ունեցած հայերի Մեծ եղեռնը (ցեղասպանություն տերմինը օգտագործված չէր-Հ. Ա.): Այդ մասին օրերս Գերմանիայի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը եւս մեկ անգամ հիշեցրեց Անկարային: Հ. Ա.**

## Թուրք մեսխեթցիների ամենուր խցկվող հարցը

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նախագահ Մովլութ Չավուշօղլուն, ինչպես արդեն տեղեկացրել էր «Ազգը», այսօր ժամանում է Ադրբեջան՝ առաջին պաշտոնական այցելությամբ: Ապրիլի 13-16-ին Ադրբեջանում Չավուշօղլուն հանդիպելու է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, խորհրդարանի խոսնակ Օքթայ Ասադովի, ԱԳՆ ղեկավար Էլմար Մամեդյարովի եւ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, ԵԽԽՎ նախագահը հանդիպումներ կունենա նաեւ վեհաժողովում ադրբեջանական պատվիրակության անդամների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Ապրիլի 15-ին Չավուշօղլուն կայցելի Գյանջա եւ կհանդիպի տեղի իշխանությունների հետ:

Հետաքրքրական է, որ ադրբեջանական կայքէջերի համաձայն, Չավուշօղլուին Ադրբեջանում ներկայացվելու են, ի շարս այլ քննարկումների, մեսխեթցի թուրքերի խնդիրները (այս մասին հայտարարում է մեսխեթցիների «Վաթան» կազմակերպության նախագահ Իբրահիմ Բուրխանովը): Նա նշել է, թե ձգտելու են հանդիպել ԵԽԽՎ նախագահի հետ՝ քննարկելու թուրք մեսխեթցիների Վրաստան վերադառնալու հարցը:

Ադրբեջանում մեսխեթցիների հայրենադարձության հարցը շահարկվում է ամենից առաջ այն պատճառով, որ, խոսակցությունների համաձայն, մեսխեթցիների վերադարձը կարող է լինել հայաբնակ Ջավախք:

Ա. Հ.

## Նախագահի հայտարարությունը Էրդողանի հետ հանդիպումից հետո

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպումից հետո այցելել է ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի շիրիմին: Այնտեղ հավաքված է եղել նաեւ ամերիկահայությունը, Սերժ Սարգսյանը հանպատրաստից հանդիպում է ունեցել եւ հանդես եկել ելույթով:

Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպմանը՝ ՀՀ նախագահն ասել է. «Հայաստանի դիրքորոշումը եղել եւ մնում է շատ հստակ. Թուրքիան չի կարող նախապայմանների լեզվով խոսել Հայաստանի ու հայության հետ: Մենք դա պարզապես թույլ չենք տա»: Նա նաեւ հավելել է, որ Հայաստանը չի պատրաստվում որեւէ ձեւաչափով քննության առարկա դարձնել ցեղասպանության փաստը կամ ձեւացնել, թե հավատում է, որ Թուրքիան կարող է որեւէ դրական դերակատարություն ունենալ ղարաբաղյան հիմնախնդրի բանակցային գործընթացում:

«Ցանկացած նոր արտաքին քաղաքական ուղեգիծ ենթակա է փորձությունների, որովհետեւ մենք անցնում ենք չտրորված արահետով: Ես վստահ եմ, որ Հայաստանը պատվով է բռնելու նա այս քննությունը», հայտարարել է նախագահը:

## Առաջնային գծում իրավիճակը կայուն է

**«Չնայած պատերազմի վտանգը միշտ էլ գոյություն ունի, կարծում եմ՝ Ղարաբաղի եւ Ադրբեջանի շփման գոտում ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը փոքր է, «Արմինֆո» գործակալության փոխանցմամբ՝ Արցախում հայտարարել է ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանը: Նա հավելել է, որ յուրաքանչյուր զինվորական մշտապես գիտակցում է պատերազմի վտանգը, հետեւաբար ամենօրյա պատրաստությունն ուղղված է նրան, որ մարտական պատրաստվածությունը լինի մշտական բարձր վիճակում եւ հնարավոր լինի համաչափ ձեւով պատասխանել ամեն մի ոտնձգության:**

**Առաջնային գիծ կատարած այցելության ժամանակ նախարարը փաստեց, որ ինժեներական կառույցները կատարյալ են, դիրքեր՝ ամուր: Առաջնային գծում իրավիճակը կայուն է:**

**Անդրադառնալով ղարաբաղա-ադրբեջանական շփման գոտում առկա դիպուկահարների խնդրին՝ նախարարը հավելեց, որ հակառակորդի դիպուկահարներին հակազդում են հայկական կողմի դիպուկահարների կրակով:**

**Արցախ կատարած այցելության ժամանակ Սեյրան Օհանյանը հանդիպել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին: Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության փոխանցմամբ՝ հանդիպմանը մասնակցել է նաեւ ԼՂՀ ՊԲ նախարար Մովսես Հակոբյանը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ազգային ժողովի նախագահը՝ Լիբանանում

Եռօրյա պաշտոնական Լիբանանում է Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը: Այցի առաջին օրը՝ ապրիլի 11-ին տեղի է ունեցել Հայաստանի եւ Լիբանանի խորհրդարանական պատվիրակությունների հանդիպումը: Ողջունելով Հայաստանի ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանին՝ Լիբանանի խորհրդարանի ղեկավար Նաբիհ Բըրրին նշել է, որ Հայաստանի եւ Լիբանանի կապերը պատմական են, Լիբանանի հայերը կենդանի կամուրջ են երկու պետությունների միջեւ: Երկու պետությունները 19 միջպետական համաձայնագիր են կնքել, որոնք վավերացրել են զույգ երկրների խորհրդարանները: Լիբանանի օրենսդիր մարմնի ղեկավարի խոսքով՝ երկու երկրների տնտեսական հարաբերությունները զիջում են քաղաքական հարաբերություններին՝ խորհրդարաններն այստեղ անելիք ունեն, ինչպես նաեւ այն գործում, որ խորհրդարանական կապերի եւ ժողովրդական դիվանագիտության մակարդակով ավելի լավ հասկանան միմյանց:

Իր պատասխան խոսքում Հայաստանի Ազգային ժողովի նախագահը կարեւորել է երկու երկրների կապերի ակտիվացումը՝ նշելով, որ հարաբերությունները չեն կարող զարգանալ առանց շոշափելու նաեւ միջխորհրդարանական համագործակցությունը:

Խոսելով Լեռնային Ղարաբաղի մասին՝ Հ. Աբրահամյանը շեշտել է, որ Լեռնային Ղարաբաղը չի կարող լինել Ադրբեջանի կազմում (Լիբանանի խորհրդարանի նախագահը խոսել էր ինքնորոշման իրավունքից): Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Լիբանանի խորհրդարանի ղեկավարը հույս է հայտնել, որ դրանք շուտով կկարգավորվեն՝ աջակցության պատրաստակամություն հայտնելով: Հ. Աբրահամյանն ասել է, որ հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը ձգձգում է Թուրքիայի խորհրդարանը, փորձ է արվում դրանք կապել ԼՂ հարցի հետ, մինչդեռ այդ երկու հարցերն իրար հետ կապ չունեն:

Երկու խորհրդարանների ղեկավարները փոխըմբռնման հուշագիր են ստորագրել: Ավելի ուշ իր պատվին տրված պաշտոնական ճաշի ընթացքում Հ. Աբրահամյանը մասնավորապես ասել է, որ անցյալ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված եղեռնից մազապուրծ մեր շատ հայրենակիցների համար լիբանանյան հյուրընկալ հողը դարձավ ոչ միայն փրկության հանգրվան, այլեւ հարազատ օջախ, իսկ այժմ էլ հայկական արմատներ ունեցող Լիբանանի քաղաքացիների ներգրավվածությունը կյանքի բոլոր ոլորտներում, մասնակցությունը պետական կառավարմանը՝ ի դեմս հայազգի նախարարների եւ պատգամավորների, վկայում են ոչ միայն նրանց գնահատված լինելու, այլեւ երկրում տիրող հավասարության եւ արդարության մթնոլորտի մասին. «Մենք ունենք հարեւան, որի նախագահն ու իշխանությունները պարբերաբար հանդես են գալիս ռազմատենչ հայտարարություններով: Հայ ժողովուրդը պատերազմ չի ցանկանում, բայց եթե այն պարտադրվի՝ մենք պատրաստ ենք պաշտպանել մեր ժողովրդի արժանապատվությունը», ասել է Հ. Աբրահամյանը:

Երեկ Բաաբդայում Հայաստանի ԱԺ նախագահը հանդիպեց Լիբանանի նախագահ, գեներալ Միշել Սլեյմանի հետ, որից հետո հայկական պատվիրակությունն ուղեւորվեց Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրիի նստավայր:

Երեկ տեղի է ունեցել նաեւ Հ. Աբրահամյանի հանդիպումը Լիբանանի ԱԳ եւ էմիգրանտների նորանշանակ նախարար Ալի Շամիի հետ: Վերջինս ասել է, որ այս երկրում հայերին էմիգրանտներ չեն համարում: Հանդիպման ընթացքում խոսվել է ոլորտում երկու երկրների հարաբերությունների սերտացման խնդիրների մասին:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Աջակցությունը ԼՂՀ-ին կա ու կլինի

Անցած շաբաթավերջին Արցախ էր ժամանել ՀՀ կառավարական պատվիրակությունը վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ:




Առաջին այցը Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոց էր, որտեղ Տիգրան Սարգսյանը մասնակցեց համակարգչային կաբինետի բացման արարողությանը: Նույն առաքելությամբ վարչապետը եղավ Շուշիի Մուրացանի անվան դպրոցում: Այցելություն եղավ նաեւ պաշտպանության բանակի զորամասերից մեկը, որտեղ պատվիրակության անդամները ծանոթացան զինծառայության պայմաններին:

Շաբաթ օրվա կեսօրին տեղի ունեցավ երկու կառավարությունների համատեղ նիստ: Բարձր գնահատելով 2009 թվականին ԼՂՀ կառավարության կատարած աշխատանքը, Տիգրան Սարգսյանը գոհունակությամբ նշել է, որ մշակված բոլոր ծրագրերն էլ հաջողությամբ իրականացվում են: Արցախին ցուցաբերվող աջակցությունները շարունակվելու են, խոստացել է ՀՀ վարչապետը:

Տ. Սարգսյանն անդրադառնալով Արցախում զբոսաշրջության հնարավորություններին, ասել է, որ անցյալ տարի զբոսաշրջային հատուկ փաթեթներ կազմելու արդյունքում 300 պաշտոնյաներ իրենց ամառային հանգիստն անցկացրել են Ղարաբաղում, ինչը ոգեւորել է շատերին: Ակնկալվում է, որ ընթացիկ տարում նրանց թիվն առնվազն կեռապատկվի:

ԼՂՀ կառավարության ղեկավար Արա Հարությունյանն իր հերթին գոհունակություն հայտնելով լայնաշերտ օժանդակությունների առթիվ, միաժամանակ ներկայացրեց Արցախի սոցիալ-տնտեսական ներկա կացությունը հատկանշող մի շարք տվյալներ: Դրանց լուծման համար ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը: Արա Հարությունյանի մատուցմամբ, համատեղ ուժերով կարգավորման կարիք ունեն զբոսաշրջության, էներգետիկայի, վերաբնակեցման ասպարեզներին առնչվող, կենսաթոշակների ու սպիրտային խմիչքների իրացման հետ կապված եւ այլ հարցեր, որոնց վերաբերյալ նիստում ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն:

Տիգրան Սարգսյանն այցելել է նաեւ «Արցախֆրուտ» ընկերություն, համտեսել այդտեղ արտադրվող տեսականին: Նա կոչ է արել նախապատվությունը տալ տեղական արտադրանքին, շեշտելով դրա որակական հատկանիշները:

ՀՀ վարչապետին Ստեփանակերտում ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպմանը կարեւորվել է համագործակցության խորացման անհրաժեշտությունը, մասնավորապես, ՀՀ մարզերի եւ ԼՂՀ շրջանների միջեւ տնտեսական կապերի ամրապնդման առումով:

Հանդիպումից հետո պատասխանելով լրագրողների հարցերին, Տիգրան Սարգսյանը խոսել է միասնական էներգետիկ դաշտի մասին, այս համատեքստում հատկանշելով էներգահամակարգի զարգացման խնդիրները: Նա միաժամանակ անդրադարձել է Ստեփանակերտի օդանավակայանի հեռանկարներին, ասելով, որ օդանավակայանի գործարկումով փոխվում է տնտեսական բաղադրիչը՝ ունենալով նաեւ քաղաքական բովանդակություն:

Կիրակի օրը ԼՂՀ նախագահն ու ՀՀ վարչապետը եղել են Մարտակերտի շրջանում՝ մասնակցելով Թրղե-1 հիդրոէլեկտրակայանի բացման արարողությանը, որից հետո միասին այցելել են Թրղե-2 հիդրոէլեկտրակայանի շինհարթակ, ծանոթացել այնտեղ իրականացվող աշխատանքներին:

Ղարաբաղյան այցի շրջանակներում ՀՀ կառավարության պատվիրակությունը նաեւ այցելել է «Բեյզ Մեթըլս» ընկերություն՝ տեղում ծանոթանալով ոսկու արդյունահանման գործնական պայմաններին:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Համախմբումը Հայաստանի բանկային համակարգում անխուսափելի է

Այս մասին «Ամերիաբանկի» սեփականատեր կիպրական «Թի Դի Էս հոլդինգ լիմիտեդ» ընկերության կողմից «Կասկադ» բանկի բաժնետոմսերի ձեռքբերման վերաբերյալ ապրիլի 10-ին հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ ասաց ռուսաստանյան «Տրոյկա դիալոգի» եւ հայկական «Ամերիաբանկի» տնօրենների խորհրդի նախագահ Ռուբեն Վարդանյանը: Նրա համոզմամբ, Հայաստանի բանկային համակարգը նույնպես պետք է անցնի այն ճանապարհը, որ անցել են շատ երկրների բանկային համակարգեր: Ըստ Ռուբեն Վարդանյանի, հարկ է գիտակցել, որ մրցակցությունը բանկերի միջեւ ընթանում է ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: «Հայաստանում գտնվող բոլոր բանկերի համար կարեւոր է մրցունակ լինել բոլոր՝ կապիտալի, տեղեկատվական տեխնոլոգիաների, մենեջմենտի, հաճախորդների սպասարկման առումներով», ասաց նա:




«Ամերիաբանկի» տնօրենների խորհրդի նախագահը տեղեկացրեց նաեւ, որ «Կասկադ բանկի» հետ միավորվելուց հետո բանկի ռազմավարությունը կմնա անփոփոխ, ձգտելով մրցունակ լինել ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: Այս առթիվ «Ամերիագրուպի» գործադիր տնօրեն Անդրեյ Մկրտչյանը նշեց, որ հնգամյա ռազմավարական ծրագրում ընդգրկված է ռուսական, իրանական եւ վրացական շուկաներում բանկի հնարավոր մասնակցության հարցը:

Խոսելով բանկերի միավորման մասին, Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը ողջունելի համարեց այդ երեւույթը եւ ասաց, որ ԿԲ-ն պատրաստ է աջակցել բանկերի միավորմանն ու խոշորացմանը՝ մինչեւ 3 տարի ժամկետով վարկային գիծ տրամադրելով:

**Ա. Ս.**

ՀԱՄԱՌՈՏ

# Ցեղասպանության ճանաչման գործում ավանդի համար

**Նախագահ Սերժ Սարգսյանն ապրիլի 10-ին հրամանագիր է ստորագրել Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած անձանց մրցանակ շնորհելու մասին: Այս մասին հայտնեցին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից:**

**Նախագահի հրամանագրով 2009 թվականի մրցանակ է շնորհվել Վիլյամ Շաբասին (Իռլանդիա)՝ Հայոց ցեղասպանության գիտական հիմնավորման եւ դրա ժխտմանը հակազդելու նախաձեռնությունների համար, Սարգիս Շահինյանին (Շվեյցարիա)՝ Շվեյցարիայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացը նախաձեռնելու եւ դրա ժխտումը քրեորեն հետապնդելի դարձնելու գործում ունեցած ավանդի համար:**

# Կաչինսկու մահը չի ազդի հայ-լեհական հարաբերությունների վրա

**Այս մասին հայտարարել է Լեհաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Գալոյանը: Դեսպանը նշել է, որ կատարվածն, անշուշտ, ողբերգություն է, որը որոշ չափով կարող է ազդել Լեհաստանի քաղաքական դաշտի դասավորումների, ներքաղաքական կյանքի վրա. «Սակայն էական փոփոխություններ դժվար թե լինեն», ընդգծել է Գալոյանը: Դեսպանը նշել է նաեւ, որ նախագահի մահից հետո Լեհաստանում կարող է թիվ մեկ քաղաքական ուժը դառնալ վարչապետ Դոնալդ Տուսկի կուսակցությունը: Հիշեցնենք, որ Տուսկը մեկ ամիս առաջ Հայաստանում էր եւ փոխգործակցության համաձայնագիր ստորագրեց մեր երկրի հետ. «Կան բոլոր նախադրյալները՝ ակնկալելու հայ-լեհական հարաբերությունների հետագա խորացում եւ ջերմացում», եզրափակել է դեսպանը:**

ՀԱՅԱՑՔ

# Ծուռ հայելիների միջեւ

**Հայաստանը դատարկվում է՝ թե՛ ֆիզիկապես եւ թե առավել եւս՝ բարոյապես: Կարեւոր չէ, թե զանազան վիճակագրական տվյալներ ներկայացնող քանի պաշտոնյա վարժ կամ կմկմալով թվեր կներկայացնեն՝ ապացուցելու համար, որ արտագաղթը նվազել է, զբոսաշրջիկները պարզապես գրոհել են Հայաստանը, համաշխարհային տնտեսական ճգնաժամը վաղուց հաղթահարված է, գյուղատնտեսությունը փթթում է, կրթությունը հասնում-անցնում է եվրոպա-ամերիկյան բոլոր չափանիշներին, թանկացումները չնչին են՝ համեմատած հայրենի կառավարության ձեռնարկած «հակընդդեմ» ու վիթխարի քայլերի՝ ուղղված բացառապես անապահով խավի շահերի պաշտպանությանը: Արվեստները ծաղկում են, տպագիր-էլեկտրոնային մամուլն ու հեռուստատեսությունը միմիայն ճշմարիտ տեղեկատվություն են տարածում եւ հայրենասիրական-կրթական-դաստիարակչական հաղորդումներ հեռարձակում, կոռուպցիան վաղուց հաղթահարված-անցած է բոլոր օղակներում՝ դպրոցներից սկսած, պետական հիմնարկություններով վերջացրած, դատարաններն ամենաարդար ու իմաստուն վճիռներն են ընդունում, բոլորն աշխատանք ու բավարարից էլ մի բան ավելի եկամուտ ունեն: Մի խոսքով՝ ամեն ինչ շատ, շատ լավ է ու գնալով ավելի է լավանում: Իհարկե, մեր իշխանավորներն այդպես չեն արտահայտվում, բայց քննադատությունները, որ կարծես արվում են միայն քննադատություն հնչեցնելու համար, եւ գրեթե համատարած անտարբերությունը, եթե ոչ՝ անգործությունը, ավելի վատ են: Ամեն ինչ լավ է, բայց, չգիտես ինչու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ոչ միայն երջանիկ ժպիտով չեն աշխատում ի բարօրություն իրենց եւ ի փառս հայրենի տնտեսության, այլեւ կարծես թե նույնիսկ դժգոհ են. ոնց որ թե բողոքում են գների աճից, կրթությունից, աշխատանքի բացակայությունից կամ աշխատանքային իրավունքների չգոյությունից, կեղծիքներից՝ համատարած կեղծիքներից՝ լինեն դրանք հերթական-արտահերթ ընտրություններում, թե հեռուստատեսությամբ, միջազգային ասպարեզներում, թե հայրենի ամբիոնների մոտ: Կեղծիքներ միջանձնային-միջխմբային հարաբերություններում, կեղծիքներ՝ նույնիսկ եկեղեցում, նույնիսկ՝ աղոթքի ժամանակ: Անկեղծ են միայն մռայլությունն ու մղումը դեպի փողը՝ մեկը՝ ծայրը ծայրին հասցնելու ցանկությունից դրդված, մյուսը՝ խելքից դուրս ունեցածին էլի ու էլի ավելացնելու մոլուցքին վաղուց ու անհուսորեն գերի դարձած:**

**Ժամանակը չէ՞ կանգ առնելու: Թե՞ արդեն վաղուց եւ անդառնալիորեն կորսված է հնարավորությունը, եւ մնում է պարզապես հետեւել՝ որը սրտի ցավով, որը՝ վիճակագրի չորությամբ, թե ինչպես է դատարկվում Հայաստանը: Նախ եւ առաջ՝ բարոյապես:**

**ԱՐԾՐՈՒՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**
**Report.am**

# Շնորհակալություն

**Երեւանի Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական ազգային կենտրոնի որովայնային բաժանմունքի բաժնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու Գագիկ Աշոտի Համբարձումյանին՝ բարձրակարգ վիրահատության, բժիշկ Հարություն Վարդանյանին, ավագ բուժքույր Անահիտ Դալլաքյանին, վիրակապարանի բուժքույր Լենա Համբարձումյանին, ողջ բժշկական եւ հերթապահ անձնակազմին՝ ջերմ ու մարդկային վերաբերմունքի համար:**

**ՀՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**
**Քաղաք Վանաձոր**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Գազի գնի իջեցո՞ւմ, թե՞ ուղեվարձի բարձրացում

Աբովյան-Երեւան երթուղային տաքսու վարորդը երեկ բողոքում էր, որ մեկ խորանարդ մետր գազի գինը նախօրոք արդեն թանկացած 200 դրամից հասել էր 220 դրամի: Անշուշտ, մայրաքաղաքի եւ նաեւ մարզերից մայրաքաղաք եկող երթուղայինների բազմաչարչար վարորդները դժգոհ էին իրավիճակից: Ընդ որում, եթե մի խումբ վարորդներ պահանջում էին պարզապես իջեցնել գազի գինը, մյուսների պահանջն էր բարձրացնել ուղեվարձերը: Վարորդների խոսքերով նրանք օրական 14 հազար դրամ պլան են տալիս, 9 հազար դրամ գազի համար են վճարում. «Տակը բան չի մնում», շարունակում էր գանգատվել Աբովյան-Երեւան երթուղայինի վարորդը: Որոշ գծերի վարորդներ երեկ առհասարակ գործադուլ էին արել, սակայն հենց երեկ գազի գնի 220 դրամ սահմանումը չեղյալ հայտարարվեց, միայն դրանից հետո որոշ վարորդներ վերադարձան աշխատանքի, բայց ոմանք էլ առհասարակ համաձայն չեն նման պայմաններով աշխատել (օգտվելով առիթից կարելի է, չէ՞, հասնել ուղեվարձի բարձրացմանը - Հ. Ա.):

Հետաքրքրական է, ի՞նչ կլինի, եթե հանկարծ որոշում կայացվի, հաշվի առնելով գազի գնի բարձրացման հետեւանքով առաջացած «հարգելի պատճառը», երթուղայինների ուղեվարձերը բարձրացնել: Նշենք, որ մայրաքաղաքային «100-դրամանոց» երթուղայինների փոխարեն մարզերից, բնականաբար, կրկնակի, եռակի են վճարում քաղաքացիները Երեւան հասնելու համար, իսկ եթե լինի նաեւ թանկացո՞ւմ...ինչպես մեր զրույցում նշեց «Աբովյան-Երեւանի» վարորդներից մեկը. «Այ էդ ժամանակ ժողովուրդը կհասկանա մեզ»: Հայկական մենթալիտետի համաձայն, «եթե ես վատ եմ ապրում, ինչո՞ւ հարեւանս պետք է լավ ապրի», ի՞նչ անենք, որ մի օր էլ կարող է վարորդը լինել պարզապես ուղեւոր:

**Հ. ԱՓՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 12/04/2010 22:13 Page 1



ԱԶԳ

# Անցուդարձ

## Ղարաբաղի հարցը՝ Թուրքիայի մոտեցման «գործոն»

*ԱՄՆ-ը Սարգսյան-Էրդողան, Օբամա-Սարգսյան հանդիպումներից առաջ արդեն խոստումնե՞ր է տվել թուրքական կողմին*

Հայ-թուրքական գործընթացում այնպիսի իրավիճակ է ստեղծվել, երբ տարբեր մեկնաբանություններից յուրաքանչյուրը հիմնավորում գտնելու հավանականություն ունի: Որոշ մեկնաբանությունների ու գնահատականների համաձայն, Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների նորմալացումը կարող է ոչ հեռու ապագայի հարց լինել այն դեպքում, երբ գնահատողների ու վերլուծաբանների մեկ այլ խումբ գտնում է, թե այդ գործընթացը մեռել է, սակայն կողմերն այդ հանգամանքի հետ հաշտվելու մտադրություն չունեն կամ չեն ցույց տալիս, թե հասկանում են գործընթացի վախճանի իրական լինելը:

Ինչեւէ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի հրավերով ապրիլի 11-ին աշխատանքային այցով մեկնեց Վաշինգտոն՝ մասնակցելու միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին, այցելության հիմնական նպատակ ունենալով ԱՄՆ-ի նախագահի հետ հայ-թուրքական գործընթացի քննարկումը:

Ինչպես նախապես տեղեկացրել էր Հայաստանի նախագահի գրասենյակը, Սերժ Սարգսյանը Վաշինգտոնում երկկողմ հանդիպումների կլինի ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի, պետքարտուղար Հիլարի Քլինթոնի, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Գագաթաժողովի աշխատանքներից ու նշված հանդիպումներից հետո Սերժ Սարգսյանը կարճատեւ արձակուրդի է գնում, ընդ որում, չի տեղեկացվում, թե հատկապես որտեղ է անցկացնելու իր հանգիստը Հայաստանի նախագահը:

ԱՄՆ-ը, մինչեւ Հայաստանի նախագահի այցը Վաշինգտոն, նախ կարեւորել էր Հայաստանի հետ հարաբերությունները, հետո էլ պարզաբանել, որ կարեւորման զգալի մասն էլ վերաբերում է հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման ընթացքին, որոնց առնչությամբ ստորագրված արձանագրություններին մեծապես աջակցել է նաեւ Միացյալ Նահանգները:

Անցյալ շաբաթավերջին ԱՄՆ անվտանգության խորհրդի պաշտոնական ներկայացուցիչ Մայք Համերը, ճեպազրույցում անդրադառնալով ԱՄՆ-ի եւ Հայաստանի նախագահների հանդիպմանը, նշել էր, թե Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունները կարեւոր են, նաեւ հաշվի առնելով արձանագրությունների ստորագրմանը ԱՄՆ-ի ցուցաբերած աջակցությունը:

ԱՄՆ-ի մայրաքաղաքում նախատեսված էր նաեւ Հայաստանի նախագահի եւ Թուրքիայի վարչապետի հանդիպումը, որ տեղի է ունեցել երեկ երեկոյան, ԱՄՆ տեղական ժամանակով սակայն, ըստ էության, մինչեւ գագաթաժողովի աշխատանքների մեկնարկը:

Այն, որ այս հանդիպմանը ամենից առաջ քննարկվելու են Հայոց ցեղասպանության առնչությամբ ԱՄՆ Կոնգրեսի բանաձեւին, ԱՄՆ նախագահի ապրիլ-24-յան ուղերձին ու ընդհանրապես ցեղասպանության ճանաչման գործընթացին, ինչպես նաեւ հայ-թուրքական արձանագրություններին առնչվող հարցեր, թերեւս կասկած չի հարուցում, չնայած Սարգսյան-Էրդողան հանդիպման օրակարգը որեւէ կերպ հրապարակային չի դարձել:

Միաժամանակ, ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նամըք Թանը «Associated Press»-ին հայտարարել է, թե մարտի 4-ին ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունմանը հետեւած հետկանչից հետո կրկին Միացյալ Նահանգներ է վերադարձել միայն, երբ Օբամայի վարչակազմը, ըստ էության ԱՄՆ պետքարտուղարի միջոցով, վստահեցրել է, թե ԱՄՆ նախագահը հանդես կգա Կոնգրեսի՝ ցեղասպանության ճանաչման գործընթացի դեմ, իսկ ապրիլի 24-ին իր ուղերձում չի օգտագործի «Ցեղասպանություն» բառը: «Մենք ստացել ենք որոշ հավաստիացումներ, որ գոհացնում են մեզ», ասել է Թուրքիայի դեսպանը:

Սակայն, այդուամենայնիվ, Սարգսյան-Էրդողան հանդիպման օրակարգի բովանդակության անհայտության ֆոնին հետաքրքրական է, որ Թուրքիայի վարչապետը, մինչեւ Վաշինգտոն մեկնելը, հայտարարել էր, թե ԱՄՆ այցելության առաջնային թեման հայ-թուրքական գործընթացն է ու դրա առնչությամբ առկա զարգացումները, ընդ որում, դրանցում Թուրքիայի վարչապետը նշել է նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցին անդրադարձի տարբերակը:

Էրդողանի խոսքերով, որ փոխանցում են երկրի վարչապետին օդանավակայանում հանդիպած թուրքական լրատվամիջոցները, ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է ավելի ակտիվ լինի արդյունքների հասնելու համար: Թուրքիայի վարչապետը, սեփական հայտարարության համաձայն, Վաշինգտոնում իր երկկողմ հանդիպումներում էլ է անդրադառնալու Մինսկի խմբի գործունեությանը: Ընդ որում, Էրդողանը, վկայակոչելով վերջերս Ֆրանսիա կատարած այցելությանը Նիկոլա Սարկոզիի հետ հանդիպումը, ասել է, թե խնդիր չէ հայ-թուրքական սահմանը բացելը, եթե «իր պարտականությունները կատարի ԵԱՀԿ Մինսկի խումբը», ասել է թե՝ լուծվի ղարաբաղյան հարցը:

Հայաստանը բազմիցս կրկնել է, որ ղարաբաղյան հարցը չի կարող կապվել հայ-թուրքական արձանագրությունների հետ, առավել եւս լինել նախապայման: Հայաստանի նախագահի արդեն Վաշինգտոնում գտնվելու պահին երեկ «News.am»-ին տված հարցազրույցում Հայաստանի տեսակետը եւ մեկ անգամ վերահաստատել է Հանրապետական կուսակցության խմբակցության քարտուղար **Էդուարդ Շարմազանովը**. «Հայկական կողմը հայտարարել է, որ մտադիր չէ Թուրքիայի հետ քննարկել ղարաբաղյան հարցը, քանի որ այդ երկիրը խնդրի հանդեպ կողմնակալ վերաբերմունք ունի: Կարծում եմ, որ Սարգսյան-Էրդողան հանդիպման ժամանակ ղարաբաղյան հարցը չի քննարկվի»:

Այս ամենով հանդերձ, հայ-թուրքական գործընթացի համատեքստում ներկա դրությամբ կարեւոր խնդիր-հարց է մնում արդեն իսկ ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը: Հասկանալի է, որ հայկական կողմը առանձնակի խնդիրներ չի նշում ու դրսեւորում արձանագրությունների խորհրդարանում վավերացման առնչությամբ այն դեպքում, երբ թուրքական կողմից նմանօրինակ մոտեցում կարծես չի դրսեւորվում: Ավելին, Հայաստանի նախագահը մինչեւ Վաշինգտոն այցելությունը, Տավուշի մարզ այցի ընթացքում հայտարարել էր, թե Հայաստանը գրեթե կայացրել է իր որոշումը գործընթացի վերաբերյալ, որ, սակայն, կիրառարկի վաշինգտոնյան բանակցություններից հետո:

Թուրքական աղբյուրները նշում են, թե նախորդ շաբաթ Էրդողանի հատուկ ներկայացուցիչ Ֆերիդուն Սինիրլիօղլուն Երեւան էր բերել Թուրքիայի վարչապետի հավաստիացումները, թե Թուրքիան պատրաստ է սկսել արձանագրությունների վավերացման գործընթացը: Չնայած դրան, թուրքական վերլուծություններում առավելապես ներկայացվում է այն մոտեցումը, թե արձանագրությունները ավելի շուտ չեն վավերացվի թուրքական խորհրդարանում: Ընդ որում, այդ մոտեցման համար որպես հիմնավորում են ներկայացվում Թուրքիայի խորհրդարանի ծանրաբեռնված օրակարգն ու առկա իրավիճակը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

## Թուրքիան իր էությամբ ֆաշիստական պետություն է

**«Եթե Հայաստան-Թուրքիա հարաբերությունները նմանեցնենք մի ծառի, ապա պատկերն այսպիսին է՝ Հայաստանում խոսում ենք միայն այդ ծառի տերեւների մասին, սակայն մոռանում ենք դրա արմատներն ու աճման ուղղությունը, իսկ բուն արմատն այն է, որ Թուրքիան թշնամի պետություն է, որի ռազմավարական նպատակների մեջ է մտնում Հայաստանի գաղութացումն ու ոչնչացումը», երեկ Մամուլի ազգային ակումբում՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն Արմեն Այվազյանը:**

**Բանախոսի խոսքով՝ Հայաստանի քաղաքական վերնախավը համառորեն չի ուզում տեսնել հայ-թուրքական խնդրի վերը նշված բուն արմատը: Թուրքիայի Հանրապետությունը,**



**որը Օսմանյան ցեղասպան կայսրության լիիրավ իրավահաջորդն է, իր էությամբ ֆաշիստական պետություն է: Թուրքիան այսօր էլ իրականացնում է ռասիստական քաղաքականություն ե՛ւ հայկական հարցում, ե՛ւ քրդական հարցում, ե՛ւ օժանդակում է Ադրբեջանին վերջինիս ռասիստական՝ հայատյացության, քաղաքականության մեջ:**

**«Եթե մենք շարունակում ենք այդ թշնամուն համարել պոտենցիալ գործընկեր, ապա է՛լ ավելի ենք քայքայում հայ ժողովրդի ընդհանուր դիմադրական ներուժն ու համահայկական միասնությունը, այն էլ այսօր, երբ մեծացել է պատերազմի հավանականությունը», ասում է Արմեն Այվազյանը եւ հավելում, որ համահայկական հարցերում մեր ունեցած միասնականությունն անցած տարիների համեմատությամբ խիստ պակասել է:**

**Բանախոսը նկատում է, որ Հայաստանում չի գործում պետական ղեկավարության մակարդակով սխալներն ընդունելու, դրանք քննության առնելու եւ շտկելու որեւէ մեխանիզմ, այդ պատճառով էլ Հայաստան-Թուրքիա ձախողված գործընթացի բոլոր պատասխանատուները դեռ զբաղեցնում են իրենց պաշտոնները:**

**«Վերջերս ՀՀ նախագահը խոսեց հայկական Նյուրնբերգից, ինչը շատ գովելի է, - ասում է քաղաքագետը,- «հայերի Նյուրնբերգ» նշանակում է դահիճներին հասանելիք պատիժ, իսկ զոհերին՝ հայ ժողովրդին ու Հայաստան պետությանը, հասանելիք փոխհատուցում, սակայն մինչեւ այսօր ի՞նչ են արել ՀՀ ղեկավարությունն ու քաղաքական ուժերն այդ «Նյուրնբերգին» հասնելու համար: Անկախության 20 տարիների ընթացքում այդ ուղղությամբ որեւէ աշխատանք չի կատարվել»:**

**Արմեն Այվազյանը նշում է, որ Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերություններն իրապես կարգավորելու համար նախ եւ առաջ պետք է պահանջներ դնի, քանի որ Հայաստանն է զոհը, եւ այսօր վերջինս է ենթակա թուրքական շրջափակմանն ու ցեղասպանության ժխտմանը, ինչը համաշխարհային մակարդակով բոլոր մասնագետների կողմից համարվում է Ցեղասպանության քաղաքականության շարունակություն: Քաղաքագետն ավելացնում է. «Հայաստանը պետք է պահանջի առնվազն երկու պայմանի իրականացում՝ Թուրքիան նախ պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը, երկրորդ՝ դադարեցնի Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանին օժանդակելը, որից հետո Հայաստանը Թուրքիայի հետ արդեն կարող է նստել բանակցությունների սեղանին: Եթե մենք չենք կատարում այս երկու պահանջները, այլ միայն, ինչպես Հայաստանի ղեկավարությունն է անում, կենտրոնանում ենք դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ շրջափակման վերացման վրա, որն էլ անվանվում է սահմանների բացում, ապա հայ-թուրքական հակամարտությունը շարունակվելու է»:**

**Թուրքիայի եւ Ադրբեջանի ռազմավարական նպատակն է Հայաստանը ջախջախելը՝ լինի տնտեսապես թե ռազմական ճանապարհով:**

**Եթե Թուրքիան բացի սահմանն ու դեսպանություն հաստատի Երեւանում, ապա լրացուցիչ լծակներով կիրականացնի նաեւ իր թշնամական քաղաքականությունը, օրինակ՝ կփորձի տնտեսապես ներխուժել Հայաստան:**

**«Այսօր արդեն տեղեկություններ ունենք, որ Հայաստանում թուրքական ընկերությունները փորձում են ավելացնել իրենց ներդրումները,- տեղեկացնում է Արմեն Այվազյանը,- իր դեսպանության միջոցով Թուրքիան նաեւ փորձելու է իրականացնել ադրբեջանամետ քարոզչություն»:**

**Վերջում քաղաքագետն անդրադարձավ նաեւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումներին: Արեւմտյան որոշ ուժեր, ըստ բանախոսի, այդ ճանաչումներն օգտագործում են հօգուտ իրենց, ոչ թե հօգուտ Հայաստանի ու հայության:**

**«Մինչեւ այսօր միջազգային ատյաններում ընդունված բոլոր բանաձեւերը (բացառությամբ Լիբանանի խորհրդարանինը) շրջանցում են Հայոց ցեղասպանության թե՛ պատժելիության, թե՛ հատուցման խնդիրները», ավելացնում է Արմեն Այվազյանը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Ղարաբաղյան հակամարտությունն ու հայ-թուրքականը՝ վաշինգտոնյան հանդիպման համատեքստում

**Մինչ Վաշինգտոնում Սարգսյան-Էրդողան հանդիպման մեկնարկը, Երեւանում, քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչներ գնահատականներ տվեցին վաշինգտոնյան այցի կապակցությամբ: Ներկայացնելով ընդդիմադիր եւ իշխանամետ մի շարք քաղաքական գործիչների տեսակետեր՝ հավելենք, որ ընդդիմադիր թեւը համոզված է, որ վաշինգտոնյան հանդիպումը ազդեցություն կունենա ոչ միայն հայ-թուրքական հարցում, այլեւ ղարաբաղյան հակամարտության խնդրում: Իշխանական թեւը բացառում է Ղարաբաղի խնդրի քննարկումը:**

**ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը Սերժ Սարգսյան-Ռեջեփ Թայիփ Էրդողան հանդիպումից ակնկալիքներ չունի. հայ-թուրքականի կամ ղարաբաղյանի հարցում էլ որեւէ փաստաթուղթ չի ստորագրվի: Թեպետ փաստաթուղթ չի ստորագրվի, սակայն Զուրաբյանը վստահ է. ճնշումներ կլինեն՝ հատկապես Ղարաբաղի ու մասնավորապես ազատագրված տարածքների վերադարձի առումով: ՀՀՇ վարչության նախագահը կարծում է, որ Սարգսյանն ամեն ինչ կանի խուսանավելու եւ ոչինչ չստորագրելու համար: Նա վստահ է՝ վաշինգտոնյան նախաձեռնությունը դեմքը փրկելու միջոց է, որպեսզի Օբաման ապրիլի 24-ին Ցեղասպանություն բառը չարտասանելու հիմնավորում ունենա:**

**Արցախից քաղաքագետ Ալեքսանդր Քանանյանն այցից ակնկալիքներ չունի: Նա նախագահին մաղթում է անընդհատ հիշել՝ ինչ է նշանակում Հայաստանի անվտանգություն, եւ որ գոյություն ունեն ոչ միայն հանրության դատապարտություն կամ սահմանադրական իրավունքի ոտնահարման համար սահմանված հնարավոր պատիժներ, այլեւ դաշտային իրողություն:**

**«Այն ավելի զորեղ է, քան Սպիտակ տանը կամ Մոսկվայում նրա վրա գործադրվող տեսական, իրականում երբեք անհաղթահարելի չեղած ճնշումները: Եվ այն պահին, երբ գիտակցությունն այնքան մթագնի, որ ինքը համարձակվի անձնական, խմբակային, ներիշխանական շահը գերակայելի համարել Արցախի եւ Հայաստանի շահի նկատմամբ, ապա ոչ միայն իր մոտ, այլեւ կողմնակիցների դռները կթակի այդ դաշտային իրողությունը, որը լինելու է շատ ավելի արդար, սկզբունքային եւ հետեւողական՝ մեղավորներին պատժելու համար»: Նա վստահ է, որ սահմանը չի բացվի, առանց Արցախի հարցում էական զիջման՝ համոզված լինելով, որ եթե նման զիջում լինի, ապա առաջին հարվածն իրենց վրա կզգան Արցախի իշխանությունները: Նա համոզված է, որ ցանկացած զիջում կբերի Արցախի եւ Սյունիքի հայաթափմանը՝ հավելելով, որ բնակչությունը կընդվզի այդ որոշման դեմ: Միաժամանակ Քանանյանը հավելում է, որ տարածքների հանձնումն այժմ ավելի անիրական է, քան 10 տարի առաջ: «Ազատագրված տարածքներում մարդիկ են ապրում, ընտանիքներ են ստեղծվում, երեխաներ են ծնվում, դպրոց գնում, որոնց ծննդյան վկայականներում գրված են այդ տեղանունները»:**

**Քաղաքագետի համար կա մեկ պարզ ճշմարտություն՝ ԼՂ ինքնորոշումը անվտանգության լավագույն երաշխիքը չէ: «Ոչինչ չարժե միջազգայնորեն ճանաչված ԼՂ ինքնորոշումը՝ ինչ-ինչ սահմանափակումներով կամ թեկուզ անսահմանափակ, եթե մենք կորցնում ենք մեր անվտանգության միակ գործող երաշխիքը, որը ներկայիս սահմանային գծի պահպանումն է: Եթե մենք դրանից նահանջ արձանագրենք, ապա մեր իսկ ձեռքով վերացնելու ենք այն միակ իրական երաշխիքը, որ այդքան տարիներ փրկել է երկիրը պատերազմի վերսկսման վտանգից», ասաց նա:**

**ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովը վստահ է, որ Սարգսյան-Էրդողան հանդիպման ժամանակ ղարաբաղյան հարցը չի քննարկվի: Ըստ նրա, հայկական կողմը չի քննարկի ղարաբաղյան հարցը, որովհետեւ Թուրքիան կողմնակալ վերաբերմունք ունի հարցի նկատմամբ:**

**ՀԱԿ ներկայացուցիչ Վլադիմիր Կարապետյանը հարցի կապակցությամբ այլ կարծիք ունի. «Եթե Սարգսյանը չհամաձայներ Էրդողանի հետ քննարկել ղարաբաղյան հարցը, ապա նա պետք է հրաժարվեր Թուրքիայի վարչապետի հետ հանդիպումից կամ էլ հերքեր Դավութօղլուի հայտարարությունն այն մասին, որ Վաշինգտոնում Թուրքիայի վարչապետն ու ՀՀ նախագահը քննարկելու են Ղարաբաղի խնդիրը»:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 12/04/2010 22:13 Page 1



# Ինչո՞ւ դեռեւս տաբու է Հայոց ցեղասպանությունը

***Համացանցային կայքերում վերոնշյալ վերնագրի թուրք հեղինակ` Էրոլ Օվկորայն ունի մոտ 10 հոդվածներ, որոնք արծարծում են գրեթե նույն թեման: Մի քանիսում նա նույնիսկ հարց է առաջ քաշում վերացնելու այժմյան թուրքական զինված ուժերը ներկայիս «ինքնագլուխ գործելու ձեւաչափով» եւ ստեղծելու փոխարենը «պրոֆեսիոնալ նորմալ բանակ»: Այս առումով ստորեւ թարգմանաբար ներկայացվող իր հոդվածի վերջում նա հիացմունքով է արտահայտվում Ֆելիպե Գոնսալեսի մասին, որը գրեթե նույն բանն իրականացրեց Իսպանիայում:***

Հայոց ցեղասպանության մասին առաջին անգամ լսեցի Փարիզում 70-ական թվականներին եւ ամենատրամաբանական հարցը, որ ինքս ինձ ուղղեցի այդ ժամանակ, նաեւ իմ գրություններում արծարծեցի (համալսարանական կուրսային աշխատանքներում, եւ «Լը Մոնդ» թերթին ուղարկված նամակում), հետեւյալն էր. եթե Թուրքիայի Հանրապետությունը հիմնված է Օսմանյան կայսրության մերժման վրա, ապա ինչո՞ւ 1915-ի հայերի ցեղասպանությունը չի բարդվում օսմանցիների վրա: Ինչո՞ւ է թուրքական հանրապետությունն իր վրա վերցնում այդ սկանդալային իրադարձության (որը 20-րդ դարի առաջին ոճիրն էր` ուղղված մարդկության դեմ եւ առաջին ցեղասպանությունը) պատասխանատվությունը: Հետագայում այդ հարցը միշտ օրակարգում մնացել է լրագրողի իմ ողջ կարիերայի ընթացքում:

Ինձ ընդհանրապես ճանաչում են որպես մի լրագրողի, ով 1980-84 թվերին բացատրում էր թուրքերին, թե ինչ է ԱՍԱԼԱՆ` հայկական ահաբեկչությունը: Ես սոցիալիստ էի, բայց ահաբեկչությունների դեմ, եւ իմ հոդվածները նույնիսկ որոշ առումով վավերացրին հարաբերությունները Ֆրանսուա Միտերանի սոցիալիստական կառավարության (որին ես պաշտպանում էի) եւ Թուրքիայի միջեւ: Անձամբ ես, ընտանիքս եւ ընկերներս շատ ենք տառապել ԱՍԱԼԱ-ից: Ընկերոջս` Նազան Էրենի հայրը` Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Իսմայիլ Էրեզը սպանվեց Փարիզում պարտականությունները կատարելիս: Ընկերս` Գյոքբերկ Էրգենեքոնը վիրավորվեց Հռոմում: Նույնիսկ իմ անունը եւս ընդգրկվեց ԱՍԱԼԱ-ի «սեւ ցուցակում» եւ հանվեց միայն այն բանից հետո, երբ անձամբ հանդիպեցի այդ ժամանակվա ԱՍԱԼԱ-ի փաստաբան, իսկ այժմ Ֆրանսիայի տնտեսական վերափոխումների ծրագրի պատասխանատու Պատրիկ Դեւեջյանի հետ: Այդ թվերին (1982) ես այդ իրադարձությունները ցեղասպանություն չէի համարում, բայց չէի ընդունում նաեւ Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը: Զարմիկս` Սըդքի Սենսերը հայտնվել էր Անկարայի «Էսենբողա» օդանավակայանում ԱՍԱԼԱ-ի կատարած հարձակման ժամանակ եւ հրաշքով ողջ մնացել թուրք ոստիկանների հակադարձ կրակոցներից (8 անգամ), եւ մորս ու մորաքույրերիս հետ, որոնք նույնպես այնտեղ էին, դուրս եկել օդանավակայանից: Իրականում այս ցանկը շատ երկար է, բայց նպատակս պարզապես ցույց տալն է, որ ես շատ եմ առնչվել հայկական հարցին եւ բավական շատ բան գիտեմ այդ մասին: Նաեւ շատ եմ տառապել այդ պատճառով եւ բարոյական իրավունք եմ վերապահում ինձ ասելու այստեղ այն, ինչ մտածում եմ: Կարճ ասած, սրանք այն եզրակացություններն են, որ որպես մտավորական հանգել եմ 35 տարի առնչվելով Ցեղասպանության հարցին` բազմիցս վերանայելով իմ դիրքորոշումը:

Տարիների ընթացքում կարդալով այդ թեմայով հրատարակված նոր փաստաթղթերն ու գրքերը, պարզել եմ, որ իմ սկզբնական հարցը (ցեղասպանությունը օսմանցիների վրա բարդելու վերաբերյալ) խեղաթյուրման հետեւանք է եւ զուրկ է ամեն տեսակի իմաստներից հետեւյալ առնվազն երեք պատճառներով:

ա) Ջնայած Մուսթաֆա Քեմալը այնքան էլ լավ հարաբերությունների մեջ չէր Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռյակի հետ եւ, Գալիպոլիում պատերազմական գործողություններին մասնակից լինելով, (որոշ իմաստով դա նպաստեց, որ նա հետագայում հարգված առաջնորդ դառնա) չէր մասնակցել հայերի ցեղասպանությանը անմիջականորեն, դրա իրագործումը, այնուամենայնիվ, շատ լավ ծառայեց իր նպատակներին` հանրապետական վարչակարգի հիմքերը դնելով թուրք ազգության (ռասայի) վրա: 1926-27 թվերին թուրքական ցեղի վերաբերյալ բանավեճերը հիմնականում պետության ազգային գաղափարախոսության` (թուրքական ցեղ, թուրքական ազգություն) գլխավոր թեմայի շուրջն էին անցկացվում, եւ այդ պատճառով էլ Անատոլիան պետք է «մաքրված», զտված լիներ բոլոր տեսակի քրիստոնյա եւ օտար տարրերից (հայեր, հույներ, ասորիներ, քրդեր): Էթնիկական, մշակութային, տնտեսական եւ սոցիալական զտումներն ակտիվորեն իրագործվեցին հանրապետական Թուրքիայի ժամանակաշրջանի յոթ ցեղասպանությունների միջոցով: Անատոլիայում ոչ հայ մնաց, ոչ հույն, ոչ էլ ասորի: Քրդերը դիմադրեցին եւ հակառակ չորս ցեղասպանությունների` չոչնչացան: Այդ պատճառով էլ Թուրքիայում ամեն ոք պետք է հարգի քրդերին` իրենց կյանքի եւ իրավունքների համար պայքարելու համար: Այնպես որ «զանգվածային բնաջնջման» տեսանկյունից օսմանցիներից ժառանգած շարունակությունն ակնհայտ էր: Վերջին 95 տարիների ընթացքում 10 ցեղասպանություններ են կատարվել այս հողի վրա (այցելել www.kuyerel.com կայքի արխիվները): Հանրապետության հիմնադիրների շարքերում էին հայերի ցեղասպանությունը կազմակերպած, իրագործած կամ որեւէ ձեւով դրան առնչված անձնավորություններ:

բ) Օսմանցիներից հանրապետությանն են անցել նաեւ հայերից բռնագրաված ապրանքներն ու նյութական, դրամական միջոցները, որոնք վճռական դեր խաղացին անկախության պատերազմը ֆինանսավորելու գործում: Բացի Լենինի տրամադրած դրամական միջոցներից եւ զենքերից, այդ պատերազմի համար հայթայթած ամենամեծ ֆինանսական աղբյուրը ցեղասպանության հետեւանքով հայերից խլած գումարն էր, որի միջոցով էլ զենք ու զինամթերք գնվեց, բանակը կազմավորվեց, զինվորների տեղաշարժը իրականացվեց:

Այդ գործընթացներում ընդգրկված մարդիկ հարստացան եւ կազմեցին սոցիալական մի նոր խավ` տիրանալով հայերի ունեցվածքին: Օրինակ` այսօրվա Սաբանջի ընտանիքի նախնիներից է բեռնակիր Հաջի Օմեր Սաբանջին, իսկ Քոչ ընտանիքը սերում է նպարավաճառ Վեհբի Քոչից: Այս ձեւով դրվեց հիմքը նոր շարժման:

գ) Հայերի ցեղասպանությանն անմիջական մասնակցություն ունեցող մարդասպանները (մարդիկ, որոնց ձեռքերը արյան մեջ էին խրված) կազմավորեցին նորաստեղծ հանրապետական վարչակարգի քաղաքական եւ վարչական ընտրանին: Նրանք համապատասխան պատկառանք ձեռք բերեցին` հայերից խլած փողերի մի մասը նվիրելով անկախության պատերազմի ֆոնդին: Մուստաֆա Քեմալը ձեւացրեց, թե ոչինչ չգիտի նրանց անցյալի մասին: Այդ մարդկանց թվում էին, օրինակ, Շյուքրու Քայան (ներքին գործերի նախարար, Ժողովրդա-հանրապետական կուսակցության ընդհանուր քարտուղար), Մուսթաֆա Աբդուլ-Հալիք Ռենդան (Ազգային ժողովի նախագահ), Արիֆ Ֆեւզին (նախարար), Ալի Ջենանի Բեյը (արդյունաբերության նախարար), Ռուշտու Արասը (արտգործնախարար) եւ այլք: Այստեղ էլ ենք շարունակություն տեսնում օսմանյան ժամանակաշրջանից: Մուստաֆա Քեմալը օգտվեց այս մարդկանցից եւ նրանց` այդ մարդասպաններին վստահեց կարեւոր պաշտոններ հանրապետական Թուրքիայում:

Հայերի ցեղասպանության տաբու լինելու պատճառները թաքնված են այս երեք նկատառումների հետեւում: Այլապես, շատ հեշտ էր լինելու խնդիրը լուծել ցեղասպանության մեղքը օսմանցիների վրա բարդելու միջոցով:

Այն անձնավորությունը, որ օրակարգային հարց դարձրեց այս ամենը եւ հիմնավոր ուսումնասիրություններ կատարելով ազդեցություն ունեցավ թուրք մտավորականության վրա (հայերի ցեղասպանության լուսաբանման առումով) Թաներ Աքչամն է: Վերը նշված պատճառների հետեւանքով ամեն անգամ, որ «հայերի ցեղասպանություն» արտահայտությունը հնչում է, առողջ դատողությունից զուրկ մարդիկ Թուրքիայում նյարդայնանում են: Իմ ասածն այստեղ այն է, որ հակառակ պաշտոնական պատմական թեզին, Թուրքիայի Հանրապետությունը չհիմնվեց հակաիմպերիալիստական պատերազմ մղելու արդյունքում (անկախության պատերազմում Թուրքիայի բանակը կռվեց միայն հույների դեմ եւ ոչ թե Ֆրանսիայի կամ Անգլիայի դեմ, որոնք այդ ժամանակվա իմպերիալիստական պետություններն էին):

Այն հիմնվեց հայերի ցեղասպանության հիման վրա: Իրերի այս վերագնահատումը նշանակում է, որ այն, ինչ ձեզ եւ բոլոր մյուսներին ասել են եւ սովորեցրել, աղբարկղը գցելու նյութ է: Սա է իրական պատճառը, որ մեծ ցավ է առաջացնում «Հայոց ցեղասպանության» արծարծումը:

1923-ից ամեն ինչ ստի վրա է հիմնված եղել: Իրավիճակն այնքան էլ հասարակ չէ, ինչպես որոշ մտավորականներ փորձում են ներկայացնել, նշելով, թե պետությունը ցեղասպանության իրականությունը թաքցնում է: Այսօր, երբ խոսքը վերաբերում է հայերի ցեղասպանությունը ճանաչելուն, շատ բան, ամեն ինչ պետք է դնել սեղանի վրա եւ քննարկել: Հանրապետությունը, քեմալիզմը, պետությունը, պետության գաղափարախոսությունը, հանրապետությունը հիմնողներն ու կառավարողները, վարչակարգը, երկրի քաղաքական համակարգը, բանակը, համալսարանները, կրթական ծրագրերը, մամուլը, ընտանիքը, գործարար շրջանակները (կապիտալի կուտակումների աղբյուրները), դատարանները, քաղաքական կուսակցությունները եւ այլն: Մի խոսքով, ամեն ինչ պարզ է, որ ոչ ոք չի կարող դիմակայել նման հսկայական բեռին, հատկապես եթե մեզ նման ապրում է կրիպտո-ֆաշիստական (թաքնված ֆաշիստական) եւ կրիպտո-ամբողջատիրական վարչակարգի պայմաններում: Շատ դժվար է, չասելու համար անհնարին, նույնիսկ երազում լուծել վերոնշյալ բոլոր հարցերը:

Այս տրավմատիկ իրավիճակը, իր պատմական, քաղաքական եւ մտավորական առումներով, մղոններով հեռու է մեր իսլամիստական կառավարության հնարավորություններից ու կարողություններից: Ոչնչի հնարավոր չէ հասնել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ստորագրված արձանագրություններով: Չէ՞ որ Անկարայում անտեսանելի ուժեր, 24 ժամվա ընթացքում անվավեր դարձրին այդ արձանագրությունները, այն էլ վարչապետի ձեռքով, նրա միջոցով: Այս պետությունը, իր ներկա կառուցվածքով, հետ է մղելու ամեն տեսակի լուծում, որովհետեւ ոչ մի լուծում չկա, որ ընդունելի լինի նրա համար:

Ինչպես երկրում առաջացած որեւէ այլ խնդիր, այս խնդիրն էլ կարող է լուծել միայն բարձրագույն մտավորական կարողությունների տեր մի քաղաքագետ, ով ժողովրդավարության կուլտուրան կդարձնի իր բնավորության մի մասնիկը, իշխանության ղեկը կստանձնի ընտրությունների միջոցով եւ հասարակական կարծիք կձեւավորի այդ ուղղությամբ: Սովորական, փոքր մարդկանց համար անկարելի է լուծել Թուրքիայի այս հսկայական խնդիրները: Մենք կարիք ունենք Միտերանի, Ալիենդեյի եւ Ֆելիպե Գոնսալեսի մակարդակի քաղաքագետների եւ պետական գործիչների, որպեսզի կարողանանք լուծել դրանք: Այլ խոսքով ասած, մենք Մեծ Մարդկանց կարիք ունենք:

**Թարգմ.**
**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

ՀԱՄԱՌՈՏ

## Դահիճների դատավարության մասին

### *Տատրյան-Աքչամ գիրքը 3-րդ անգամ է հրատարակվում Թուրքիայում*

Հակառակ Թուրքիայում տաբու համարվող եւ պատժի ենթակա թեմա շոշափելուն, **Վահագն Տատրյանի** եւ **Թաներ Աքչամի** համահեղինակությամբ մոտ 16 ամիս առաջ Բիլգի համալսարանի հրատարակչատան լույս ընծայած «Թեհջիր վե Թաքթիլ: Դիվանի Հարբի Օրֆի Զաբիթլարի: Իթթիհադ վե Թերաքքինին Յարգիլանմասը» խորագրով գիրքը` հայերի ցեղասպանությունը կազմակերպած եւ իրագործած դահիճների դատավարության մասին, արդեն 3-րդ անգամ է վերահրատարակվում Թուրքիայում: Այս մասին է վկայում խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը, որ նշում է, թե չափազանց մեծ է հետաքրքրությունը այդ 732 էջանոց հատորի նկատմամբ, որը հիմնված է օսմանյան աղբյուրներից վերցրած նյութերի վրա: Նախաբանը (125 էջ) գրել է պրոֆ. Տատրյանը: Թուրքական ռազմական դատարանների երկար ամիսների քրտնաջան աշխատանքի հետեւանքով քրեական վկայությունների ձեռքբերումից հետո «Մազհար հետաքննչական հանձնաժողովը» կարողացել է դատապարտել այդ բոլորը եւ պատասխանատվության կանչել հանցագործներին:

Ակնկալվում է, որ գրքի անգլերեն տարբերակը լույս կտեսնի մինչեւ այս տարեվերջ:

Հ. Ծ.

## Ֆրենկ Փալոնը` ԱՄՆ-ի «Հայաստան» հիմնադրամի գրասենյակում

Լոս Անջելեսից ստացված մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մարտի 29-ին հայկական հարցերով զբաղվող կոնգրեսական խմբակցության համանախագահ, կոնգրեսական **Ֆրենկ Փալոնն** այցելել է Մ. Նահանգների արեւմտյան շրջանի «Հայաստան» հիմնադրամի գրասենյակ ու հանդիպումներ ունեցել տնօրենների խորհրդի եւ աշխատակազմի անդամների հետ: Նա շնորհավորել է բոլորին 2009-ի հեռուստամարաթոնի հաջող ավարտի առթիվ, երբ 16 միլիոն դոլար հանգանակվեց հերոսական Շուշիի վերակառուցման ծրագրերի համար, գովասանքով արտահայտվել հիմնադրամի կատարած մարդասիրական եւ սահմանային գյուղական վայրերում զարգացման աշխատանքների վերաբերյալ:

Հիմնադրամի նախագահ Արա Ադիշյանը շնորհակալություն է հայտնել կոնգրեսականին` ժամանակ գտնելու եւ գրասենյակ այցելելու համար, եւ նշել, որ մեծապես գնահատում է նրա անշահախնդիր նվիրվածությունն ու պաշտպանությունը հայկական հարցերին: Կոնգրեսականի պատվին տրված նախաճաշի ընթացքում մտերմիկ զրույցը շարունակվել է հարց ու պատասխանի ձեւով:

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 12/04/2010 22:14 Page 1



# Լեհաստանում մեկշաբաթյա սուգ է

## Նախագահական օդանավի անկումը՝ օդաչուների սխա՞լ



Սմոլենսկի մոտակայքում շաբաթ առավոտյան Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկու «Տու-154» օդանավը վատ տեսանելիության պայմաններում վայրէջքի փորձ կատարելիս ընկավ եւ ջախջախվեց: Այդ աղետը շարունակում է մնալ աշխարհի լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Նախագահից եւ նրա տիկնոջից բացի, օդանավում կային Լեհաստանի քաղաքական եւ զինվորական ղեկավարներ՝ 88 ուղեւոր եւ անձնակազմի 8 անդամ: Պաշտոնական պատվիրակությունը Կատինում մասնակցելու էր 1940-ին այնտեղ գնդակահարված լեհ սպաների հիշատակի միջոցառումներին: Հաղորդվում է, որ ջախջախված օդանավի բոլոր ուղեւորները եւ անձնակազմի անդամները զոհվել են:

ՌԴ ուժային կառույցների աղբյուր վկայակոչելով՝ ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ աղետի վայրում փնտրիչները շարունակում են որոնել զոհերի դիակները: Միեւնույն ժամանակ Մոսկվայում դատաբժշկական փորձաքննությունը փորձում է պարզել զոհերի ինքնությունը:

Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում հատուկ չվերթերով Լեհաստանից ժամանել են զոհերի հարազատներն ու մերձավորները: Օդանավակայանում աշխատում են ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության շտաբը, հոգեբաններ, բժիշկներ: Զոհերի ինքնությունը ճանաչելու եկած լեհ հյուրերին հատուկ ավտոբուսներով տանում են հյուրանոցներ: Մոսկվայի կառավարությունն իր վրա է վերցրել նրանց կեցության եւ սննդի ծախսերը, ինչպես նաեւ ծիսական ծառայությունները:

Ջախջախված օդանավի «սեւ արկղերը» կիրակի օրը հասցվել են Միջպետական ավիացիոն կոմիտեի հատուկ լաբորատորիա, որտեղ մասնագետները պետք է պարզեն աղետի պատճառը: Բայց արդեն այժմ փորձագետները համակարծիք են, որ մեղավոր է անձնակազմը, որը համառորեն հրաժարվում էր վատ եղանակի պայմաններում վայրէջք կատարել Մինսկի, Վիտեբսկի եւ Մոսկվայի օդանավակայաններում, «Գազետա.ռու» էլեկտրոնային հրատարակությունը հաղորդում է, որ դեռ աղետի նախօրեին ՌԴ հիդրոօդերեւութաբանական կենտրոնը հաղորդել էր մոտեցող մառախուղի մասին: Օդանավի վայրէջքի պահին տեսանելիությունը ընդամենը 100-150 մետր էր:

Սակայն անձնակազմը որոշել էր վայրէջք կատարել Սմոլենսկում: Դա հաստատվում է ձայնագրություններով: Օդային տրանսպորտի դաշնային գործակալության ղեկավար Ալեքսանդր Ներադկոյի խոսքերով, օդանավը շարժվել է չափազանց փոքր բարձրությամբ եւ առաջին անգամ բախվել է 8 մետրանոց ծառի, թեեւ պետք է թռչեր մոտ 60 մետր բարձրության վրա:

Արտակարգ իրավիճակների նախարար Սերգեյ Շոյգուի խոսքերով, թռիչքի հետագիծը վկայում է, որ օդանավը թռիչքուղուց շեղվել է ոչ միայն ըստ բարձրության, այլեւ ըստ լայնության (առնվազն 150 մետր):

ՌԴ օդուժի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Այոշինը պնդում է, որ օդանավի անձնակազմը մի քանի անգամ չի կատարել օդանավակայանի թռիչքների ղեկավարի ցուցումները:

# Հունգարիայի ընտրություններում հաղթում է ընդդիմությունը

Հունգարիայում ապրիլի 11-ին կայացած խորհրդարանական ընտրություններում հաղթել է աջ կենտրոնամետ «ՖԻԴԵՍ. Համահունգարական քաղաքացիական դաշինք» կուսակցությունը, զգալիորեն առաջ անցնելով սոցիալիստներից:

Քվեաթերթիկների 99 տոկոսի մշակման արդյունքների համաձայն, «ՖԻԴԵՍ-ՀՔԴ»-ն ստացել է խորհրդարանի 386 տեղերից 206-ը: Կուսակցության առաջնորդ Վիկտոր Օրբանը, որը երկրի վարչապետն էր 1998-2000 թթ., հայտարարել է, որ արդյունքները ցույց են տալիս «անհուսալիությունը խորտակելու» ընտրողների մտադրությունը:

Հունգարիայի նախագահ Լասլո Շոյոմի խոսքերով, ընտրությունների արդյունքներն արմատապես կփոխեն երկրի քաղաքական կյանքը:

BBC-ն նշում է, որ վերջին 8 տարիներին հաջողությունն ուղեկցել էր Սոցիալիստական կուսակցությանը, որը խորհրդարանում կունենա ընդամենը 28 տեղ:

Ազգայնական «Հանուն լավագույն Հունգարիայի» կուսակցությունը կունենա 26 պատգամավոր:



Այս կուսակցությունը հայտնի է իր հակահրեական եւ հակագնչուական կեցվածքով:

Խորհրդարանում տեղերի վերջնական բաշխումը հայտնի կդառնա ապրիլի 25-ին կայանալիք ընտրությունների երկրորդ փուլից հետո: Բայց արդեն այժմ աջերի հաղթանակը կասկած չի հարուցում: Դիտորդները ընդդիմության հաղթանակը բացատրում են Հունգարիայի տնտեսական ծանր կացությամբ: Համաշխարհային տնտեսական ճգնաժամից լրջորեն տուժած երկիրը 20 մլն եվրո օգնություն է ստացել ԱՄՀ-ից, Համաշխարհային բանկից եւ Եվրոմիությունից: Նախընտրական արշավի ժամանակ Վիկտոր Օրբանը խոստացել էր նվազեցնել հարկերը եւ դրանով իսկ խթանել երկրի տնտեսությունը:

# Աֆղանստանում ՆԱՏՕ-ն կրակ է բացել ավտոբուսի վրա

ՆԱՏՕ-ի միջազգային ուժերի զինծառայողները Աֆղանստանում կրակ են բացել խաղաղ բնակիչների ավտոբուսի վրա՝ սպանելով 4 եւ վիրավորելով 18 անձանց: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Միջադեպը տեղի է ունեցել Քանդահարի շրջանում (Ղանդահարից արեւմուտք): Շրջանի նահանգապետի մամուլի քարտուղարի խոսքերով, գնդակոծման պահին ավտոբուսը եղել է Ղանդահար-Հերաթ օդակաձեւ մեծ ավտոճանապարհի վրա: Գնդակոծման պատճառները դեռ հայտնի չեն: Կատարվում է քննություն:

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում դա Աֆղանստանում օկուպացիոն զորքերի արդեն երկրորդ գործողությունն է, որի թիրախն են դառնում խաղաղ բնակիչները: Ապրիլի 6-ին Գիլմենդի նահանգում ՆԱՏՕ-ի օդուժի թիրախն էր դարձել մի բնակելի տուն, որտեղ զոհվել էին 4 խաղաղ բնակիչներ: Նույն տանը թաքնված 4 գրոհայիններ ավելի վաղ պատուհաններից գնդակոծել էին ՆԱՏՕ-ի զինծառայողներին: Նույն տանը խաղաղ բնակիչների գոյության մասին հայտնի էր դարձել միայն օդուժի հարվածից հետո:

Ռոյթերը նշում է, որ ՆԱՏՕ-ի ուժերի հարձակումների հետեւանքով խաղաղ բնակիչների սպանությունները «Թալիբան» շարժման գրոհայինների դեմ կռվող միջազգային ուժերի վարկաբեկման գլխավոր պատճառն են: Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը ՆԱՏՕ-ին քանիցս կոչ է արել ուշադիր լինել գործողությունների ժամանակ, քանի որ խաղաղ մարդկանց սպանությունները երկրի բնակչությանը տրամադրում են միջազգային ուժերի դեմ, ինչպես նաեւ գցում իշխանությունների վարկը:

Օկուպացիոն ուժերի համար առավել անհաջող է համարվում 2009 թվականը, երբ ՆԱՏՕ-ի օդուժի հարվածներից զոհվեցին 2400-ից ավելի խաղաղ բնակիչներ:

### ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Հայկական պատարագ ավստրիական Գրաց քաղաքում

Ավստրիայի Գրաց քաղաքը երկրի բնակչությամբ երկրորդ բնակավայրն է, երեք հարյուր հազարին մոտ բնակչությամբ: Նրանց թվում հայերը սակավաթիվ են, հազիվ մեկ հարյուրյակի հասնող ընտանիքներ, հիմնականում Թուրքիայից այստեղ քառասուն-հիսուն տարիներ առաջ եկածներ: ԽՍՀՄ փլուզումից հետո նրանց կազմը համալրել են նաեւ նախկին խորհրդային հանրապետությունների հայազգի ներկայացուցիչներ:



Հայ համայնքի, որպես հայկական կյանքի որոշ կողմերի կանոնակարգողի դերը վերջին տարիներին ստանձնում են հայապահպանության մտահոգություններ ունեցող տարբեր սերունդների ներկայացուցիչներ՝ ճարտարագետ ու բժիշկ, արհեստավոր ու առեւտրական այրեր: Դպրոցահասակ երեխաների համար գործում է ուրբաթօրյա դասարան, ուր հաճախողներին ուսուցանվում են հայոց այբուբենը, մանկական երգեր ու ոտանավորներ:

Գրացահայերը պարբերաբար անդրադառնում են նաեւ եկեղեցական տոներին: Մինչ այս տարվա Զատիկը, Գրացում պատարագ մատուցվում էր Քալվարիենբերգ կաթոլիկ եկեղեցում՝ ամիսը մեկ անգամ, եկեղեցու ազատ լինելու պարագայում: Գրաց քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների ջանքերով եւ կաթոլիկ եկեղեցու հետ բանակցությունների շնորհիվ այս տարի ապրիլ ամսից հայ համայնքն ունեցավ մնայուն մի եկեղեցի եւ կից սրահ, որը, չնայած վարձակալական պայմաններով, ամեն օր կարող է ծառայել հայ համայնքի կարիքներին: Եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնական հատվածներից մեկում: Վերջին վեց տարիների ընթացքում այն գրեթե չէր բացել իր դռները՝ կաթոլիկ հավատացյալների նվազման պատճառով:

Ապրիլի 4-ին՝ Սուրբ Զատկի տոնին, այս եկեղեցում առաջին անգամ մատուցվեց հայկական Սուրբ պատարագ: Օրվա պատարագիչը Ավստրիայի Հայ առաքելական եկեղեցական համայնքի հոգեւոր հովիվ Անդրեաս քահանա Իսախանյանն էր: Սուրբ պատարագի ընթացքում տեր հայրը հավատացյալներին ընթերցեց Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի զատկական պատգամը եւ փոխանցեց Քրիստոսի հարության ավետիսը: Պատարագի ավարտին տեր հայրն օրհնեց նաեւ եկեղեցուն կից սրահը՝ հույս հայտնելով, որ իր կողմից «Հայտուն» հռչակված տարածքը կծառայի հայ համայնքի բազմաբնույթ հետաքրքրություններին:

Գրացում մատուցված պատարագի առանձնահատկությունն այն էր, որ արարողության մասնակիցների թվում էին ինչպես ոչ հայախոս հայեր, այնպես էլ երիտասարդներ ու պատանիներ, ովքեր անմոռանալի տպավորությամբ բաժանվեցին միմյանցից՝ ակնկալելով նոր հանդիպումներ:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ
Ավստրիա, Գրաց

# «Կյանքը Հաիթիում՝ երկրաշարժից հետո»

Այս թեմայով Ռադնորի (Փենսիլվանիա) «Հայ քույրերի ակադեմիայում» աշակերտների առաջ հանդես է եկել Ֆիլադելֆիայից հայտնի փաստաբան Ալբերտ Մոմջյանը, որը Հաիթիում Մ. Նահանգների պատվավոր հյուպատոսն է 1978-ից հետո:

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի մարտի 20-ի համարը նշում է, որ նա երեխաներին պատմել է Ֆիլադելֆիայում «Հաիթիական կոալիցիայի առաջնորդների» համագործակցությամբ կատարած իր աշխատանքների մասին: Դրանք իրականացվել են ինչպես Ֆիլադելֆիայում ապրող հաիթցիների, այնպես էլ Հաիթիում երկրաշարժից հետո ժամանակավոր վրանային կացարաններում ապրողների շրջանում: Նա բացատրել է, որ աշխատանքների դժվարագույնը ընտանիքի ողջ մնացած անդամների վերամիավորման հարցն է եղել ու նաեւ որբացածներին հոգեբանական օժանդակություն ցուցաբերելը: Նա անդրադարձել է նաեւ Հաիթիի պատմությանը, նշելով, որ Հաիթին առաջին ֆրանսիական սեւամորթ գաղութն էր, որ անկախություն էր ստացել Ֆրանսիայից: Նա պատասխանել է այնուհետեւ երեխաների հարցերին, շնորհակալություն հայտնել նրանց հանգանակած գումարների համար եւ Հաիթիի դրոշն ու «Բաց արեք ազատության դռները» գիրքը նվիրել դպրոց-ակադեմիայի գրադարանին:

Հ. Ծ.

## «Յունիստրիմ» համակարգի հայաստանյան շրջանառությունն այս տարվա մարտին աճել է 12%-ով

«Յունիստրիմ» դրամական փոխանցումների միջազգային համակարգի շրջանառությունն այս տարվա մարտին Հայաստանում աճել է 12%-ով՝ հասնելով 38 մլն դոլարի: Հաշվետու ժամանակահատվածում դրամական փոխանցումների քանակը աճել է 9%-ով եւ կազմել 57 324: Համակարգի շրջանառությունը 2010թ.-ի առաջին եռամսյակում գերազանցել է 91,1 մլն դոլարը, քանակը՝ 136 000:

«Յունիստրիմ» համակարգը պահպանում է առաջատարի դիրքը դրամական փոխանցումների հայաստանյան շուկայում: Համակարգին բաժին է ընկնում փոխանցումների ընդհանուր շրջանառության 50%-ից ավելին: «Յունիստրիմ» համակարգի միջոցով «Յունիբանկ»-ը հնարավորություն է ընձեռում հաճախորդներին իրականացնել վարկի մարումներ եւ վճարումներ ներկրվող ապրանքների, կոմունալ ծառայությունների դիմաց: «Յունիստրիմ» համակարգից կանոնավոր օգտվող հաճախորդները կարող են «Յունիբանկ»-ում ձեւակերպել մինչեւ 5 000 դոլար սահմանաչափով U-Stream վարկը:

Ներկայումս «Յունիստրիմ»-ը ակտիվ աշխատանք է տանում ծառայությունների տեսականու ընդլայնման եւ փոխանցումները առավել հասանելի դարձնելու ուղղությամբ: Մասնավորապես, վերջերս ներդրվեց ավելի քան 90 հազար QIWI տերմինալների միջոցով փոխանցումների իրականացման նոր համակարգը: Ապագայում նախատեսվում է դրամական փոխանցումներ իրականացնել պլաստիկ քարտերի կիրառմամբ:

AZG NEW PDF.qxd 12/04/2010 22:12 Page 1



# Սփյուռքը նախապատրաստվում է ապրիլի 24-ին

ԱՄՆ-ի Ռոդ Այլենդ նահանգում Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շարքը կմեկնարկի Փրովիդենս քաղաքի Ֆայնսթայն ցուցասրահում՝ «Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցը մեր հիշողության մեջ» խորագրով ցուցահանդեսի բացմամբ: Այն հասկանշական է պատմական եւ արվեստի տեսանկյունից: Կցուցադրվեն ԱՄՆ-ի նշանավոր արվեստագետների ավելի քան 100 կտավ: Ցուցահանդեսին կմասնակցեն նաեւ շուրջ 600 պատանիներ, ովքեր ավելի քան 130 կտավներով կներկայացնեն իրենց պատկերացումներն ու մտորումները Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Կազմակերպիչները նկատում են, որ նոր սերնդի մասնակցությունը շեշտված է եւ չափազանց կարեւոր, որովհետեւ նրանք ապագայի հույսն են: «Ի՞նչ է նշանակում ինձ համար հայ լինել» հարցին գծագիր աշխատանքներով կպատասխանեն Մասաչուսեթսի մի շարք կիրակնօրյա հայկական դպրոցների աշակերտներ: Ուոթըրթաուն քաղաքում գործող ԱԼՄԱՆ (Ամերիկայի հայկական գրադարան եւ թանգարան) կազմակերպությունը կներկայացնի Հայոց ցեղասպանությանը նվիրված իր հսկայական հավաքածուն: Տեղի կունենան նաեւ ֆիլմերի դիտումներ եւ պատմական ակնարկներ:

Ցեղասպանության տարելիցին նվիված լայնածավալ միջոցառումներ կանցկացվեն նաեւ Հոլանդիայում: Ապրիլի 20-ին Het Plein հրապարակում կայանալիք ցույցի ժամանակ հոլանդահայերը կպահանջեն Թուրքիայից չուրանալ եւ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, իսկ Նիդեռլանդների կառավարությունից՝ իրագործել Ռոուվուտի առաջարկությունը, որը միաձայն ընդունել է Նիդեռլանդների խորհրդարանը 2004-ին:

«Հույժ կարեւոր է, որ հոլանդահայությունը միակամ իր սարսափն արտահայտի Հայոց ցեղասպանության եւ այն փաստի նկատմամբ, որ Թուրքիան 95 տարի հետո գարշելի կերպով հերքում եւ նսեմացնում է Հայոց ցեղասպանության եղելությունը, իսկ այդ մասին Թուրքիայում խոսելն անգամ համարվում է քրեական հանցանք: Չնայած Հայոց ցեղասպանությունը լայն ճանաչում է գտել, սակայն միջազգային հասարակությունը չի կարողացել Թուրքիային հստակ ասել, որ հերքման եւ նսեմացման գործելակերպն ընդունելի չէ եւ դրա դեմ համապատասխան միջոցներ չի կիրառել», ասված է Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի հայտարարությունում:

Ցույցի մասնակիցները մտադիր են Նիդեռլանդների իշխանություններից պահանջել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի կառուցում միջազգային օրենքի քաղաք Հաագայում:

Հիշատակի արարողություններ կանցկացվեն նաեւ Կանադայում: Կանադայի Հայկական ազգային կոմիտեի փոխանցմամբ՝ ապրիլի 14-ին Օտտավայում տեղի կունենա ընդունելություն պատգամավորների եւ սենատորների համար, իսկ Թեքեյան մշակութային կենտրոնում կբացվի ցուցահանդես «Հայոց ցեղասպանության ժխտում» խորագրով:

Ապրիլի 15-ին «Ալեք Մանուկյան» կենտրոնում Հայկական բարեգործական ընդհանուր միությունում (AGBU) տեղի կունենա 1915-ին թուրքական յաթաղանի զոհեր դարձած հայ գրողների գրքերի ցուցահանդես-վաճառք: Ապրիլի 18-ին Մոնրեալում տեղի կունենա «Ապրիլի 11 հուշարձան» գրքի շնորհանդեսը, իսկ ապրիլի 21-ին Հոլոքնութի թանգարանում՝ գերմանացի գրող եւ բանաստեղծուհի Արմինա Վագների Հայոց ցեղասպանության տարիներին արված լուսանկարների ցուցադրությունը:

Կանադայի հայ համայնքը ծրագրում է նաեւ ապրիլի 24-ին մեծ ցույց կազմակերպել Կանադայի խորհրդարանի շենքի առջեւ, բողոքի ակցիաներ Օտտավայում Թուրքիայի դեսպանատան առջեւ: Բացի այդ, Կանադայի մի շարք եկեղեցիներում կանցկացվեն հոգեհանգստյան արարողություններ 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհերի հիշատակին:

Ցեղասպանության 95-ամյակին նվիրված միջոցառումների շարքը Հալեպում սկսվել է ապրիլի 9-ին: Թեքեյան մշակութային միությունը Ս. Աստվածածին եկեղեցում կազմակերպել էր «Հայ որբերի աղերսը» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը: Ապրիլի 14-ին նույն եկեղեցում կբացվի Հայկական ճարտարապետության ուսումնասիրության հասարակական կազմակերպության տնօրեն Սամվել Կարապետյանի «Մշակութային եղեռն» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը, իսկ ապրիլի 15-ին կկայանա նրա դասախոսությունը «Արեւմտահայաստանի մշակութային կորուստները» թեմայով:

Գերմանիկ Վասպուրական մշակութային միության գործադիր մարմինն էլ մտադրվել է հրատարակել օրացույցեր, որոնց վրա պատկերված կլինեն Մեծ Եղեռնի հուշարձանն ու Ցեղասպանության 90-ամյակին նվիրված Խաչքար մանրանկարը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Եվա Մեծորյանի մենահամերգը հայրենիքում

**ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում է ապրում մանկուց հայրենասիրությամբ թրծված՝ Ամերիկայի հայ երիտասարդաց միության երբեմնի անդամ, իսկ հետագայում Ամերիկայում Հայ կանանց միջազգային ընկերակցության (AIWA) հիմնադիր, նաեւ՝ Հայաստանում նույն կազմակերպության հիմնադրման ակունքներում եղող, հայաշունչ ոգու տեր Եվա Մեծորյանը:**



**Բավական է նշել որ նա 75 անգամ եկել է Հայաստան: 1988 թ. ավերիչ երկրաշարժի օրերին նա, որպես ՀԲԸՄ-ի Նյու Ինգլընդի մասնաճյուղի նախագահ, բազմիցս օգնություն է հասցրել աղետյալներին, տարբեր դպրոցների, մանկատների եւ հիվանդանոցների: Արցախյան ազատամարտի տարիներին նա ուշի ուշով հետեւել է կատարվող իրադարձություններին եւ պատրաստել երկու խտասալիկ (1992, 1993 թթ.) ճակատում անձնազոհ կերպով կռվող հայ ազատամարտիկների մասին, որոնք ուղարկել է ԱՄՆ-ի եւ Հելսինկիի մարդկային իրավունքների պաշտպանության հանձնաժողովներին՝ հիմնավորելով, որ հայերը ոչ թե «ագրեսոր» են, այլ կռվում են իրենց ազգային ինքնորոշման համար:**

**Այս անգամ, սակայն, Եվա Մեծորյանը Հայաստան է եկել իր «Հիշատակներ» մենահամերգով, որը տեղի ունեցավ ապրիլի 10-ին, Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան լեփլեցուն դահլիճում: Եվա Մեծորյանն այս համերգի եւ իր նախորդ խտասալիկների վաճառքի հասույթը նվիրելու է Հայաստանին՝ բարեգործական նպատակներով:**

**Նա իր հազվագյուտ կոնտրալտո ձայնով ունկնդիրներին հմայեց հայ եւ օտար դասական, ժողովրդական եւ աշուղական երգերի հրաշալի կատարումներով: Քնքուշ սիրերգերից բացի, նրա ծրագրում ընդգրկված էին նաեւ հայկական խրոխտ ու մարտաշունչ հայրենասիրական երգեր, որոնք միաժամանակ ուղեկցվում էին խանդավառ ունկնդիրների ռիթմիկ ծափերով ու արտաբուխ բացականչություններով:**

**Երեկոյին հատուկ իմաստ ու հմայք էր հաղորդում Հայաստանի Վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանն իր արտասանած բանաստեղծություններով, ինչպես նաեւ Հայաստանի ժողովրդական արտիստ, քանոնահարուհի Անժելա Աթաբեկյանն իր արտառոց կատարումով եւ նվագակցող ժողովրդական գործիքների համույթով:**

**Իր բնույթով երգի տոնահանդես հիշեցնող այս երեկոն կազմակերպել եւ հովանավորել էր ՀՀ սփյուռքի նախարարությունը: Նախարարուհի տիկին Հրանուշ Հակոբյանի կողմից արժանավոր հայուհուն շնորհվեց գնահատագիր-պատվոգիր՝ բազմամյա հայանպաստ գործունեության համար:**

**Եվա Մեծորյանի կյանքի նպատակն է եղել իր ստեղծած եւ կատարած երգերի միջոցով սեր արթնացնել մարդկանց հոգիներում եւ որ ամենակարեւորն է, օտարության մեջ ապրողներին հայ երգի միջոցով հայ պահել եւ մերձեցնել հայրենիքին:**

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԱՍՈՒԼԻՍ

# «Հիմա ունենք պակաս ռիսկային, անակնկալներով չհագեցած եթեր»

## Կարծում է ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանը

**«Եթե մի քանի ամիս առաջ հայկական եթերը դիտելիս վստահ չէիր, թե ինչ ֆրազ կարող է հնչել, եւ արդյո՞ք դա այն եթերն է, որը պատշաճ է ընտանեկան դիտման համար, հիմա գոնե այդ լարվածությունը դուրս է եկել, ցցուն, արտառոց արտահայտություններ այլեւս չենք տեսնում», երեկ հրավիրած ասուլիսում հայտարարեց Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալյանը: Բանախոսի կարծիքով՝ սրա պատճառը իրենց հանձնաժողովի առաջարկած նոր չափորոշիչներն են, որոնք «կարճ ժամանակահատվածում իրենց ազդեցությունը թողեցին»: «Չնայած այս ամենին, ես կարծում եմ, որ շտկելու դեռ շատ բան կա, այդ իսկ պատճառով աշխատանքներ են տարվում մինչեւ մայիսի վերջը չափորոշիչները լրամշակելու ուղղությամբ», ասաց Ամալյանը՝ ընդգծելով, որ իրենց հանձնաժողովը կոչ է անում բոլոր շահագրգիռ կողմերին՝ անհատ քաղաքացիներին, հասարակական կազմակերպություններին, մասնագիտական կառույցներին ներկայացնել առաջարկություններ՝ չափորոշիչների կատարելագործման ուղղությամբ:**




**Մյուս կողմից էլ Ամալյանը նկատեց, որ հասարակության մեջ թյուր կարծիք է ձեւավորվել, թե ՀՌԱՀ-ը պետք է եթերը վերահսկի բոլոր տեսանկյուններից. «Սակայն դա այդպես չէ, հեռուստառադիոոլորտին առնչվող ոչ բոլոր հարցերն են վերաբերում մեր հանձնաժողովին, առհասարակ ոլորտի զարգացման համար պետք է մասնագիտացված մարմիններին հզոր լծակներ տրվեն՝ ընդլայնելով նրանց գործունեության դաշտը», նշեց Ամալյանը: Մասնագիտացված մարմիններից մեկն էլ Լեզվի պետական տեսչությունն է, որի գործառույթները, ըստ Ամալյանի, թուլացված են մեխանիզմների առումով. «Այս տեսչությունը պետք է իրավունք ստանա իր ոլորտում լիարժեք աշխատելու: Հակառակ պարագայում, եթե մենք ներխուժենք այս մասնագիտական ոլորտը, հավանաբար արդար տրտունջ կլինի, թե որքանով է ՀՌԱՀ-ը մասնագիտացված լեզվագիտական փորձագիտության իմաստով», նկատեց Ամալյանը:**

**Բանախոսն անդրադարձավ նաեւ հեռուստառադիոընկերությունների լիցենզիաներ տրամադրելու մրցույթին, Ամալյանը ընդգծեց, որ անկախ նրանից՝ կլինի ուժի մեջ թվայնացված հեռարձակման մասին օրենքը, թե ոչ, լիցենզիաներ տրամադրելու մրցույթը կանցկացվի այս տարվա հուլիսի 20-ին: «Առաջիկա հուլիսի 20-ին մրցույթ կանցկացվի բոլոր հեռարձակողների կապուղիներով, բացառությամբ 1-2 մարզային հեռուստաընկերությունների, որոնց լիցենզիայի ժամկետն այդ ամսաթվով դեռ չի ավարտվում», ասաց Ամալյանը: Բանախոսն ընդգծեց, որ այս առումով հիմնական խնդիրը Երեւանում է, «որտեղ հաճախությունները գերհագեցած են, եւ թափուր տեղեր չկան»: Ամալյանը շեշտեց, որ հեռուստագործունեության մրցույթին մասնակցելու են «բոլոր նրանք, ովքեր ցանկանում են այդ ոլորտում գործունեություն ծավալել». «Մեր օրենսդրությամբ նախատեսված է, որ նախկին գործունեությունն ընդամենը հավասար պայմանների դեպքում կարող է համարվել որպես դրական գործոն: Մնացած բոլոր դեպքերում ե՛ւ գործած հեռուստաընկերությունները, ե՛ւ այն հեռուստաընկերությունները, որոնք երբեւէ հայտնի չեն եղել հանրությանը, բայց ուզում են հայտ ներկայացնել եւ զբաղվել հեռուստատեսային գործունեությամբ, հնարավորություններով հավասարվել են», եզրափակեց Գրիգոր Ամալյանը:**

Հ. ԱՓՅԱՆ

# Մեկնարկեց «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագիրը

«Հայաստանի գրադարանային ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ՀՀ մշակույթի նախարարության հետ մայրաքաղաքում եւ հանրապետության մարզերում ու համայնքներում ապրիլի 12-19 անցկացնում է գրադարանային շաբաթ:

Գրադարանային շաբաթի հանդիսավոր բացումը կայացավ Հայաստանի Ազգային գրադարանում եւ շարունակվեց Արագածոտնի մարզի Օշական գյուղի գրադարանում:

Ապրիլի 13-ը «Մայրենի լեզվի օր» է հայտարարվել, եւ ծրագրի շրջանակներում դպրոցականների ստեղծագործական շարադրությունների մրցույթ է անցկացվելու «Հայրենիքը լեզուն է, նա է միացնում անցյալը, ներկան ու ապագան» թեմայով:

Ապրիլի 14-ի միջոցառումները նվիրվելու են Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին, հաջորդ օրվա՝ գյուղական գրադարաններին գրքերի նվիրատվությանը, ապրիլի 16-ի՝ Րաֆֆու ծննդյան 175-ամյակին: Հաջորդ երկու օրերին կլինեն հանդիպումներ ԱԺ պատգամավորների, իշխանության ներկայացուցիչների, մշակույթի եւ գիտության գործիչների հետ, որոնց ընթացքում կքննարկվեն գյուղական գրադարանների հիմնահարցերը, եւ միմյանց գրքեր կնվիրեն:

Ազգային գրադարանային շաբաթը կամփոփվի ապրիլի 19-ին Ազգային գրադարանում, գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը կներկայացնի առաջիկա ծրագրերը եւ շաբաթվա միջոցառումների արձագանքները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հայ ծանրորդների փառահեղ նվաճումը

## Ռուբէն Ալեխանյանը Եվրոպայի երիտասարդների ռեկորդ սահմանեց

***Մինսկում ավարտված ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում նոր, փառահեղ նվաճման հասան հայ ծանրորդները: Մրցահարթակ դուրս եկած 8 ծանրորդներից 7-ը տուն վերադարձան մեդալներով: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեցին Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանն (77 կգ) ու Գեւորգ Պողոսյանը (85 կգ), փոխչեմպիոններ դարձան Սմբատ Մարգարյանը (56 կգ), Մելինե Դալուզյանը (69 կգ), Արա Խաչատրյանն (85 կգ) ու Ռուբեն Ալեքսանյանը (գերծանր քաշ), իսկ Հռիփսիմե Խուրշուդյանը (75 կգ) երկամարտում արժանացավ բրոնզե մեդալի: Ընդհանուր առմամբ Հայաստանի հավաքականը նվաճեց 19 մեդալ (7 ոսկե, 8 արծաթե, 4 բրոնզե): Այդ ցուցանիշով Հայաստանը թիմային հաշվարկով զբաղեցրեց 4-րդ տեղը` հետ մնալով Ռուսաստանի (28 մեդալ, որից 12-ը` ոսկե), Թուրքիայի` 20 (10) եւ Բելառուսի` 19 (9) հավաքականներից: Սակայն պետք է հաշվի առնել, որ Հայաստանն ընդամենը 8 ծանրորդով մասնակցեց առաջնությանը, մինչդեռ Ռուսաստանը, Թուրքիան ու Բելառուսը ապարեզ էին դուրս բերել 15-ական ծանրորդի: Տարբեր պատճառներով առաջնությանը չմասնակցեցին Առաքել Միրզոյանը, Տիգրան Վարդանի Մարտիրոսյանը, Նազիկ Ավդալյանն ու Գեւորգ Դավթյանը, որոնք ի զորու էին ավելացնել նվաճված մեդալների քանակը:***





Կանանց մինչեւ 75 կգ քաշային կարգում Հռիփսիմե Խուրշուդյանն արժանապատվորեն մրցեց իր փորձառու եւ տիտղոսակիր մրցակցուհիների հետ: Պոկում վարժությունում նա ցույց տվեց 122 կգ արդյունք եւ արժանացավ փոքր բրոնզե մեդալի: Լավագույնը Եվրոպայի քառակի չեմպիոնուհի Նատալյա Զաբոլոտնայան էր (129 կգ), իսկ արծաթե մեդալը նվաճեց նրա հայրենակցուհի Նադեժդա Եվստյուխինան (127 կգ):

Հրում վարժությունում Հռիփսիմեն եւս բրոնզե մեդալ նվաճեց 151 կգ արդյունքով, ինչը նրա համար նույնպիսի պարգեւ ապահովեց նաեւ երկամարտում (273 կգ): 3-րդ մոտեցման ժամանակ Խուրշուդյանը փորձեց գերազանցել հրում վարժության աշխարհի ռեկորդը, որը պատկանում է ռուսաստանցի Սվետլանա Պոդոբեդովային (160 կգ): Սակայն 161 կգ ծանրությունը հաղթահարել նրան չհաջողվեց: Աշխարհի ռեկորդը բարելավել չհաջողվեց նաեւ Եվստյուխինային, որը երկամարտի 282 կգ արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոնուհի: Իսկ Նատալյա Զաբոլոտնայան 285 կգ արդյունքով 5-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց Եվրոպայում:

Արժանի մրցակցություն ցույց տվեց նաեւ գերծանրքաշային Ռուբեն Ալեքսանյանը: Մինչեւ 23 տարեկանների Եվրոպայի չեմպիոնն ամեն ինչ արեց մեծահասակների առաջնությունում նորամուտը հաջող նշելու համար: Պոկում վարժությունում նա ցույց տվեց 195 կգ եւ արժանացավ արծաթե մեդալի: Լավագույնը ռուսաստանցի Եվգենի Չիգիշեւի արդյունքն էր (205 կգ): Հրում վարժությունում Ռուբենը փորձեց վերացնել Չիգիշեւից 10 կգ-ի տարբերությունը, ուստի պատվիրեց 246 կգ: Դա մեկ կգ-ով գերազանցում էր աշխարհի երիտասարդական ռեկորդը: Սակայն ցավոք ծանրաձողը չենթարկվեց մեր դյուցազնին: Ռուբենը երկամարտի 432 կգ (195+237) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն` արծաթե մեդալ նվաճելով նաեւ հրում վարժությունում: Երկամարտի նրա արդյունքը մեկ կգ-ով գերազանցում էր Եվրոպայի երիտասարդական ռեկորդը, որը պատկանում էր ռուսաստանցի Եվգենի Պիսարյովին: Ավելորդ չէ նշել, որ մեր ծանրորդն առաջ անցավ օլիմպիական չեմպիոն, գերմանացի Մաթիաս Շտայներից, որը երկամարտի 426 կգ արդյունքով դարձավ բրոնզե մեդալակիր: Իսկ Եվգենի Չիգիշեւը 440 կգ (205+235) արդյունքով դարձավ Եվրոպայի եռակի չեմպիոն:

Մեր ծանրորդներից միայն Արթուր Բաբայանը (105 կգ) մնաց առանց մեդալի: Նա երկամարտի 394 կգ (178+216) արդյունքով գրավեց 5-րդ տեղը: Չեմպիոն հռչակվեց բելառուսցի Անդրեյ Արամնովը` 420 կգ (195+225): 2-րդ տեղը զբաղեցրեց ռուսաստանցի Դմիտրի Կլոկովը` 409 կգ (185+224): Բրոնզե մեդալը նվաճեց նրա հայրենակից Վլադիմիր Սմորչկովը` 408 կգ (193+215):

Կանանց գերծանր քաշայինների մրցավեճն ավարտվեց ռուսաստանցի Տատյանա Կաշիրինայի հաղթանակով` 297 կգ (135+162): Նա 2-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց Եվրոպայում: 2-րդ տեղը գրավեց ուկրաինացի Օլգա Կորոբկան` 273 կգ (123+150): Բրոնզե մեդալը նվաճեց բելառուսցի Օլգա Կնյաժիշչան` 257 կգ (116+141):

# Հովսեփյանի վրիպումը թանկ արժեցավ «Փյունիկին»

## Արա Հակոբյանը «Ուլիսին» փրկեց պարտությունից

**Արդյունավետ երկու տուրերից հետո ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի 3-րդ տուրի հանդիպումներում խփվեց ընդամենը 7 գոլ: Ընթացիկ առաջնությունում առաջին անգամ գրանցվեց ոչ-ոքի արդյունք:**

**Բավական հետաքրքրական պայքարում անցավ տուրի կենտրոնական հանդիպումն «Ուլիսի» եւ «Բանանցի» միջեւ: Երկու թիմերն էլ ակտիվ խաղ ցուցադրեցին: Առաջին լուրջ գոլային պահը ստեղծվեց 33-րդ րոպեին, երբ «Բանանցի» հարձակվող Դենիրան Օրտեգան մենմենակ հայտնվեց «Ուլիսի» դարպասապահ Վլադիմիր Մալկովի դեմ ու փորձեց նրա գլխավերեւով գնդակն ուղարկել անպաշտպան դարպասը: Սակայն հարվածը թույլ էր եւ դարպասապահը հանգիստ որսաց գնդակը: 10 րոպե անց «Բանանցը» հասավ հաջողության: Աջ թեւով Էդուարդո դո Սանթոսը սրընթաց անցում կատարեց, «Ուլիսի» դարպասապահն անհարկի ընդառաջ դուրս եկավ մրցակցի հարձակվողին, որը հեռվից գնդակն ուղարկեց դարպասը:**

**Ընդմիջումից հետո փոխարինման մտած Ալեքսանդր Պետրոսյանը զգալիորեն ակտիվացրեց «Ուլիսի» հարձակողական գործողությունները եւ իր ներդրումն ունեցավ թիմի հաջողությունում: Շուտով Պետրոսյանը տուգանայինի մատույցներից գրավեց դարպասը` վերականգնելով հավասարակշռությունը: 7 րոպե անց Պետրոսյանին վայր գցելու համար մրցավարը 11 մ հարված նշանակեց: «Ուլիսը» կարող էր կրկնապատկել հաշիվը, սակայն Թբիլաշվիլու հարվածը որսաց «Բանանցի» դարպասապահ Ստեփան Ղազարյանը:**

**79-րդ րոպեին «Ուլիսի» դարպասապահ Մալկովը կրկին անվստահ խաղաց` Սամվել Մելքոնյանի հարվածը հետ մղելով ուղիղ Էդուարդո դո Սանթոսի մոտ, որն ընթացքից գրավեց դարպասը: «Բանանցը» հաշվի մեջ առաջ անցավ եւ մոտ էր հաղթանակին: Սակայն ավելացված ժամանակում կոպտորեն սխալվեց Էդուարդ Կակոսյանը: Ուլիսցիները խլեցին գնդակը եւ փոխանցեցին տուգանային հրապարակում հսկողությունից դուրս մնացած Արա Հակոբյանին, որն էլ թիմին փրկեց պարտությունից (2-2):**

**Երկրորդ ոչ-ոքին գրանցվեց Դիլիջանում, որտեղ «Իմպուլսը» հյուրընկալել էր չեմպիոնին: Գավաթային երկու հանդիպումներում էլ «Փյունիկը» հաղթել էր միեւնույն 1-0 հաշվով, իսկ ահա առաջնության խաղում չկարողացավ գրավել մրցակցի դարպասը: Ճիշտ է, 67-րդ րոպեին փյունիկցիները գոլ խփելու հիանալի հնարավորություն ստացան, սակայն Սարգիս Հովսեփյանը չիրացրեց 11 մ հարվածը: Դարպասապահ Մայիս Ազիզյանը հետ մղեց գնդակը: «Փյունիկի» ավագն ընթացիկ առաջնությունում արդեն 2-րդ 11 մ հարվածը չիրացրեց: Նա վրիպել էր նաեւ մեկնարկային խաղում` Գյումրիում: Այսպես բարձրագույն խմբի նորեկն առաջին միավորը վաստակեց:**

**Առաջնությունում հաջող մեկնարկած «Կիլիկիան» անդրանիկ պարտությունը կրեց` 0-2 հաշվով զիջելով «Միկային»: Վերջինիս միայն ընդմիջումից հետո հաջողվեց առավելության հասնել մրցակցի նկատմամբ, երբ գոլերի հեղինակներ դարձան Ուլիսես Մոնտենեգրոն եւ Ժունիոր Էդիլսոնը:**




ՖՈՏՈԼՈՒՐ

**Գյումրիում առաջնության երկու անհաջողակների մրցավեճում հաջողությունն ուղեկցեց «Գանձասարին»: Այս խաղում էլ շիրակցի Տիգրան Դավթյանը 20-րդ րոպեին չիրացրեց 11 մ հարվածը: Իսկ ահա ընդմիջումից հետո Արսեն Ավետիսյանը գրավեց դաշտի տերերի դարպասը եւ հաղթանակ պարգեւեց իր թիմին: Դա ՀՀ առաջնություններում Ավետիսյանի 190-րդ գոլն էր: «Գանձասարը» ՀՀ առաջնություններում առաջին հաղթանակը տոնեց Գյումրիում:**

**Մինչեւ առաջնության 4-րդ տուրը կկայանան ՀՀ գավաթի կիսաեզրափակիչի հանդիպումները: Այսօր «Հրազդանում» «Ուլիսը» կհյուրընկալի «Փյունիկին», իսկ վաղը «Հանրապետականում» կմրցեն «Բանանցն» ու «Միկան»: Հետաքրքրական է, որ անցած տարի էլ կիսաեզրափակիչում մրցել էին նույն զույգերը: Հաջողությունն ուղեկցել էր «Փյունիկին» եւ «Բանանցին»: Ի դեպ, վերջին 3 տարիներին «Բանանցը» գավաթի կիսաեզրափակիչում մշտապես հաղթել է «Միկային»:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 3 | 2 | 1 | 0 | 7-2 | 7 |
| 2. Ուլիս | 3 | 2 | 1 | 0 | 6-2 | 7 |
| 3. Միկա | 3 | 2 | 0 | 1 | 8-4 | 6 |
| 4. Կիլիկիա | 3 | 2 | 0 | 1 | 6-4 | 6 |
| 5. Բանանց | 3 | 1 | 1 | 1 | 7-8 | 4 |
| 6. Գանձասար | 3 | 1 | 0 | 2 | 2-4 | 3 |
| 7. Իմպուլս | 3 | 0 | 1 | 2 | 2-8 | 1 |
| 8. Շիրակ | 3 | 0 | 0 | 3 | 1-7 | 0 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 3 |
| Էդուարդո դո Սանթոս | «Բանանց» | 3 |
| Արսեն Ավետիսյան | «Գանձասար» | 2 |
| Մինդաուգաս Գրիգալեւիչուս | «Միկա» | 2 |
| Ուլիսես Մոնտենեգրո | «Միկա» | 2 |
| Ալբերտ Թադեւոսյան | «Փյունիկ» | 2 |
| Գագա Թբիլաշվիլի | «Ուլիս» | 2 |
| Սարգիս Մովսիսյան | «Կիլիկիա» | 2 |

# Աբրահամի ներկայացուցիչները բողոքարկել են մենամարտի արդյունքը

**Արթուր Աբրահամի ներկայացուցիչները պաշտոնապես բողոքարկել են Անդրե Դիրելի հետ մենամարտի արդյունքը: Նրանք պահանջում են մենամարտը համարել ավարտված առանց հաղթողին որոշելու: Իրենց այս պահանջը Աբրահամի ներկայացուցիչները հիմնավորում են այն բանով, որ մրցավարը 10-րդ ռաունդում Դիրելի նոկդաունը չէր հաշվել, գոտկատեղից ներքեւ հասցրած մի քանի հարվածների համար էլ նրան չէր զգուշացրել: Բացի այդ, բողոքարկող կողմը նշում է, որ Աբրահամին մրցակցին ընկած վիճակում հարվածելու իրավունք էր տվել ռինգի մրցավարը, որը չէր դադարեցրել մենամարտը, երբ Դիրելը սայթաքել ու ծնկի էր իջել:**

# Հայ բռնցքամարտիկների առավելությունն ակնհայտ էր

**Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ավարտվեց բռնցքամարտի միջազգային մրցաշարը, որում խաղարկվում էին ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի մրցանակները: Մրցաշարում մեծ հաջողության հասան հայ բռնցքամարտիկները, որոնք նվաճեցին 6 ոսկե, 8 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ:**

**Մրցաշարի չեմպիոններ դարձան եւ 5 հազարական դոլարով պարգեւատրվեցին Հովհաննես Դանիելյանը (48 կգ), Դերենիկ Գիժլարյանը (51 կգ), Կարեն Այլազյանը (54 կգ), Ազատ Հովհաննիսյանը (57 կգ), Արա Պլուզյանը (60 կգ) եւ Անդրանիկ Հակոբյանը (75 կգ):**

**Հյուրերից առաջին տեղը զբաղեցրին ղազախ Ալասբեկ Ալիբեկովը (64 կգ), ուկրաինացիներ Դենիս Լազարեւը (69 կգ), Իվան Սենայը (81 կգ) եւ Դենիս Պոյացիկան, ինչպես նաեւ գերծանրքաշային, վրացի բռնցքամարտիկ Բեկա Լոբջանիձեն: Ալիբեկովը եզրափակիչում հաղթեց Վոլոդյա Հայրապետյանին, Լազարեւը պարտության մատնեց Սամվել Մաթեւոսյանին, Սենայն առավելության հասավ Արթուր Խաչատրյանի նկատմամբ: Վճռորոշ գոտեմարտում Պոյացիկայի մրցակիցը Ցոլակ Անանիկյանն էր, իսկ Լոբջանիձեն մրցեց Բագրատ Օհանյանի հետ:**

**Նշենք, որ 2-րդ տեղ զբաղեցրած բռնցքամարտիկները պարգեւատրվեցին 3 հազար դոլարով, իսկ 3-րդ տեղ գրավածները` 2 հազարական դոլարով: Մրցաշարի լավագույն թիմ ճանաչվեց Հայաստանի ազգային հավաքականը, լավագույն տեխնիկա ցուցադրած բռնցքամարտիկ` Անդրանիկ Հակոբյանը, իսկ լավագույն մրցավար` ռուսաստանցի Ռոման Մալաեւը: Նրանց հատուկ գավաթներ հանձնեց ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը:**

# Լեմանն ավարտում է ելույթները

Գերմանական «Շտուտգարտի» դարպասապահ Ենս Լեմանը հայտարարել է, որ մայիսի 8-ին կայանալիք բունդեսլիգայի ավարտական տուրի հանդիպումը վերջինը կլինի ֆուտբոլային կարիերայում: Գերմանիայի ազգային հավաքականի նախկին դարպասապահը մտադիր չէ դիտարկել որեւէ առաջարկ արտերկրում խաղալու վերաբերյալ: 40-ամյա դարպասապահը Գերմանիայի ազգային հավաքականում 61 խաղ է անցկացրել: Նա 2006-ի աշխարհի առաջնությունում բրոնզե մեդալի է արժանացել, իսկ 2008-ի Եվրոպայի առաջնությունում նպաստել է հավաքականի եզրափակիչ մտնելուն:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 12/04/2010 22:20 Page 1



# Ծանուցում

**ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**
**2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| Հազար ՀՀ դրամ | 2009թ. դեկ. 31-ի դրությամբ | 2008թ. դեկ. 31-ի դրությամբ | 2007թ. դեկ. 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ակտիվներ արտաժույթով** | | | |
| Դրամական միջոցներ | 7,776,292 | 15,441,978 | 72,430 |
| Բանկերում եւ այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 221,678,070 | 77,496,027 | 183,063,363 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները եւ վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | 459,234,675 | 339,979,737 | 318,671,929 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 917 | 917 | 1,216 |
| Մինչեւ մարում պահվող ակտիվներ | 25,171,087 | - | - |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 101,621,324 | 44,362,474 | 47,168,679 |
| Այլ ակտիվներ | 666,956 | 78,001 | 222,321 |
| | 816,149,321 | 477,359,134 | 549,199,938 |
| **Ակտիվներ տեղական արժույթով** | | | |
| Վարկեր եւ հակադարձ հետգնման պայմանագրեր | 70,735,139 | 80,955,087 | 24,600,695 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 121,204,193 | 97,050,294 | 49,245,329 |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներ | 3,862,867 | - | - |
| Հիմնական միջոցներ | 15,762,787 | 10,378,716 | 8,125,307 |
| Ոչ նյութական ակտիվներ | 427,907 | 255,827 | 62,707 |
| Այլ ակտիվներ | 2,451,325 | 1,323,943 | 883,508 |
| | 214,444,218 | 189,963,867 | 82,917,546 |
| **Ընդամենը ակտիվներ** | 1,030,593,539 | 667,323,001 | 632,117,484 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| **Պարտավորություններ արտաժույթով** | | | |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 150,616,174 | 69,788,059 | 40,040,499 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 1,329,188 | 1,030,950 | 688,013 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները եւ վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | 36,588 | - | - |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 95,263,527 | 41,337,306 | 48,039,741 |
| Այլ փոխառություններ | 28,309,397 | 12,440,435 | 10,274,856 |
| Այլ պարտավորություններ | 206,504 | 121,614 | 65,106 |
| | 275,761,378 | 124,718,364 | 99,108,215 |
| **Պարտավորություններ տեղական արժույթով** | | | |
| Թղթադրամներ եւ մետաղադրամներ շրջանառության մեջ | 320,669,631 | 344,503,231 | 350,273,664 |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 53,204,221 | 40,333,711 | 38,387,377 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 177,194,796 | 103,962,779 | 93,622,987 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 1,437,498 | 48,958,097 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 172,556,583 | 43,467,351 | 44,230,693 |
| Այլ պարտավորություններ | 853,302 | 1,244,457 | 1,090,046 |
| | 724,478,533 | 534,949,027 | 576,562,864 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 1,000,239,911 | 659,667,391 | 675,671,079 |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Թողարկված կապիտալ | 100,000 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | 11,392,622 | 9,870,486 | 9,870,486 |
| Լրացուցիչ կանոնադրական կապիտալ | 85,663,194 | 85,663,194 | 42,009,598 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | (1,414,100) | (163,455) | (108,384) |
| Կուտակված վնաս | (65,388,088) | (87,814,615) | (95,425,295) |
| **Ընդամենը` սեփական կապիտալ** | 30,353,628 | 7,655,610 | (43,553,595) |
| **Ընդամենը պարտավորություններ եւ սեփական կապիտալ** | 1,030,593,539 | 667,323,001 | 632,117,484 |

**Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը եւ կազմը**

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի եւ կազմի մասին 2009 թվականի (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

| | | | |
|---|---|---|---|
| **Տարվա սկիզբ** | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,406,823,234.13 | ԱՄՆ դոլար |
| այդ թվում` | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,406,822,547.97 | ԱՄՆ դոլար |
| որից` | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 1,899,389.00 ՀՓԻ | 2,925,571.09 | ԱՄՆ դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,230,837,462.53 | ԱՄՆ դոլար |
| որից` ազատ փոխարկելի արժույթով | | 1,230,836,776.37 | ԱՄՆ դոլար |
| **Տարվա վերջ** | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 2,003,675,650.04 | ԱՄՆ դոլար |
| այդ թվում` | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 2,003,675,041.31 | ԱՄՆ դոլար |
| որից` | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 79,537,516.00 ՀՓԻ | 124,690,210.24 | ԱՄՆ դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,363,783,517.51 | ԱՄՆ դոլար |
| որից` ազատ փոխարկելի արժույթով | | 1,363,782,908.79 | ԱՄՆ դոլար |

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Արմավիրի մարզի Արտաշարի գյուղապետարանի** խմելու-կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 4,6 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. ապրիլի 19-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

www.
azg.am

## Մրցույթի հրավեր 084/10-PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ` ագրոբիզնեսի ոլորտի փոքր եւ միջին ձեռնարկությունների արտադրանքի արտահանման առաջխաղացման միջոցառումների կազմակերպման նպատակով:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին` հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` ս.թ. ապրիլի 26, ժամը 17:00:

## Մրցույթի հրավեր 085/10-PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ` ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի համար անվտանգության համակարգի կին աշխատակցի ծառայությունների ձեռք բերման նպատակով:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին` հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` ս.թ. ապրիլի 20, ժամը 17:00:

## Մրցույթի հրավեր 086/10-PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ` ջերմամատակարարման իրավիճակը եւ ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում (2009-2010թթ. ջեռուցման սեզոնի համար) վիճակագրական հետազոտության համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին` հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` ս.թ. ապրիլի 30, ժամը 17:00:

**«Լավանդա Սիթի» ՍՊԸ**
ՀՎՀՀ 08615298
ք. Սեւան Գրիբոյեդովի 5/38

*ՁԵՎ N 1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 31.12.2009 թ.**

| ԱԿՏԻՎ | նախորդ տարի | հաշվետու տարի |
|---|---|---|
| 1. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 26549 | 25402 |
| Ընդամենը ոչ նյութական ակտիվներ | 26549 | 25402 |
| 2. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Նյութեր | 2650 | 11354 |
| Ապրանքներ | 9011 | 4970 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | - | 2522 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 606 | 174 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 12448 | 292133 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 38997 | 317535 |
| **ՊԱՍՍԻՎ** | **նախորդ** | **հաշվետու** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Կանոնադրական կապիտալի զուտ գումար | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 1320 | (66921) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 1370 | (66871) |
| ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | - | 372077 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 5752 | 7568 |
| Կարճաժամկետ կրեդիտ. պարտքեր բյուջեին | 271 | 2663 |
| Կարճաժամկետ կրեդիտ. պարտքեր սոց. գծով | - | 189 |
| Կարճաժամկետ կրեդիտ. պարտքեր հիմնադիրին | 31426 | 14 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 232 | 309 |
| Ընթացիկ պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով | - | 1586 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 37627 | 384406 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 38997 | 317535 |

*ՁԵՎ N 2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**առ 31.12.2009 թ.**

| ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻ | ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐԻ |
|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 25958 | 98529 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների ինքնարժեք | (15567) | (28733) |
| Համախառն շահույթ | 10391 | 69796 |
| Վարչական ծախսեր | - | (5420) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ | 52 | 25773 |
| Գործառնական այլ ծախսեր | 12706 | 403 |
| Ֆինանսական ծախսեր | - | (10956) |
| Գործառնական այլ ծախսեր | (11187) | (536) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | - | (83863) |
| Գործառնական շահույթ | 1571 | 25640 |
| Ֆինանսական ծախսեր | - | (10956) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | - | (83863) |
| Սովորական գործառնությունից շահույթ | 1571 | (69179) |
| Զուտ շահույթ նախքան շահութահարկի գծով նվազեցումը | 1571 | (69179) |
| Զուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 1320 | (73575) |




**Կորել է**

**Էդիկ Եղիազարյանին** պատկանող S-130 տրակտորի տեխնիկական անձնագիրը: Համարել անվավեր:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 12.04.2010, գինը` 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: